№ 16 ԿԻՐԱԿԻ, 24 ՅՈՒՆՎԱՐԻ

1916
ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
7 ամսվանը 6 ռուբլի։
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը։
Մեր հասցէն՝ Тифлисъ. редакція «Мшакъ»
Соломоновская ул. № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԻՐԱԿԻ, 24 ՅՈՒՆՎԱՐԻ № 16

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1916 Թ. ՀԱՄԱՐ
(45-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ Է՝

12 և 11 ամիս	10 ամիս	9 ամիս	8 ամիս	7 և 6 ամիս	5 ամիս	4 ամիս	3 ամիս	2 ամիս
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	5 ր.	4 ր.	3 ր.	2 ր.

1 ամիս 85 կոպէկ։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի և Հնդկաստանի բաժանորդները՝ 12 ռուբլի։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կոպ. նամականիշ։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du Journal «MSCHAK».

ԱՊՍՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Վշտահար Յարութիւն ք. Ծուղուրեանը իր 8 մանրիկ զաւակներով, Եկատերինա և Սարգիս Եղիկեանները սրտի անհուն կսկիծով յայտնում են՝ առաջինն իր անգնահատելի և աննման աշխատասէր ամուսնու, երկրորդն իր անգին դստեր, երրորդն իր անմոռանալի քրոջ

Տիրուհի Նունէ Ծուղուրեանի

անժամանակ մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 20-ին։ Յուղարկաւորութիւնը կիրակի օրը՝ ժամը 12-ին, Թանդոյեան եկեղեցու գաւթից (Михайлов. пр. № 38) դէպի Խօջիվանքի հանգստարան։ 69. 2—2

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆ
Այսօր, կիրակի,
յունվարի 24-ին
կը ներկայացնէ

ՅՈ՞ ԵՐԹԱՍ

Դրամա 5 գործ. Սօրօլչչիկօվ-Սամարինի, Թարգմ. Լ. Բաբայեանի։

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—օր. օր. Արմէն, Արփենի, տ. տ. Աբովեան, Յասմիկ, Սիրան, պ. պ. Ամօ-Խարազեան, Աղաբաբեան, Գաւրօշ, Գօլանջեան, Եանիկեան, Երամեան, Մարութեան, Յարութիւնեան II, Միքայէլեան, Ռուսեան, Սերժ, Օհանեան և ուր։

Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Տեղերի գները 50 կ.—4 կ.։
Ռեժիսսեոր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝
Ամիրաղեան և Էլիզբարեան

ԱԶԴ.—Պատրաստվում է Գօրկիի «ԶԱՆԳ».
Խմբակցութեան ռեժիսսեոր Ամօ-Խարազեանի բենեֆիսը կայանալու է չորեքշաբթի, փետրվարի 3-ին պատրաստվում է յայտնի պիէս ԱՐԻՈՆ։

ԿԱԲԻՆԵՏ բժշկական կօսմետիկայի
„ГИГІЕНА“

Դէմքի եւ մարմնի
Բժշկումն դէմքի ամէն տեսակ փչացածքների՝ կնճիռների, ճռպաւի, պրեշչերի և այլն։
Առաջարկվում է փորձված և անվնաս կօսմետիկա «Manicuir».
◆ Խորհուրդները ձրի ◆

Ծանուցագիրը ուղարկվում է 10 կ. մարկայով։ Դիմել՝ Москва. Конмерческій пер. 5, кв. 112. близъ Художеств. театра Отд., М. Հեռ. 5.37—27.
տպ. (կ.) 25—7

Ստաւրոպօլ քաղաքի հայոց եկեղեցուն հարկաւոր է
ՄԻ ՔԱՀԱՆԱՅ
ճեմարանաւարտ. կամ հոգեւոր դպրոցն աւարտած. առաւելութիւնը առաջինին։ Քահանան տարեկան ծխական արդիւնք, կրօնական դասերի ռոճիկների հետ միասին, կունենայ մօտ 2000 ռուբլի։ Ցանկացողները՝ կարող են դիմել, մինչև ապրիլի 15-ը, հետևեալ հասցէով՝ Ставрополь губ., Армянскому Приходскому Попечительству.
տպ. 65. 3—3

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նազարեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների և մանկաբարձուհի)
Վերադառնալով ձմեռային ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։
Ընդունում է ամէն օր՝ (առ. ժ. 1—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլօլակ, Բոլնիչնայա փ. № 1
Հեռախօս 10—58.
(հ.հ.և.) տպ. 638. 100—57

ԲԺԻՇԿ
Ղ. ՄԱՏՈՍԵԱՆՑ
Ընդունում է հիւանդներին ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՑ հիւանդութիւններից ամէն օր՝ երեկ. ժամը 5—7-ը, բացի կիրակի օրերից։
Սօլօլակ, Լերմոնտովսկայա փող. № 23.
տպ. (չ. ու. կ.) 957. 50—13

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԷՕՆՋԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
Պլոմբ —ոսկուց, արծաթից, ֆարֆօրից և այլն. Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։
Ընդուն. 9— առաւ., 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. [illegible]
(ա. ա.) տպ. 959. 100 20

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Ռուսաց եկեղեցական բարձր շրջանները պատրաստութիւններ են տեսնում գումարելու եկեղեցական ընդհանուր ժողով (սօբօր), լուծելու համար վաղուց հասունացած մի քանի եկեղեցական հարցեր, որոնք ահագին նշանակութիւն ունեն ժողովրդի համար։ Ներկայումս կատարվում են նախապատրաստական գործողութիւնները, և ռուսաց սինօդը, որ օրթօդօքս եկեղեցու գերագոյն ատեանն է, կազմում է խորհրդակցական ժողովներ՝ մշակելու և պատրաստելու ապագայ ժողովի քննութեան ենթակայ օրակարգային հարցերը։ Այդ խորհրդակցական ժողովներին մասնակցում են ոչ միայն եկեղեցու բարձրաստիճան պաշտօնեաները՝ միտրոպօլիտներ, եպիսկոպոսներ, այլ և աշխարհական անձինք՝ աստուածաբան և կանօնագէտ պրօֆեսօրներ և գիտնականներ։

Վաղուց, շատ վաղուց զգացվել է անհրաժեշտութիւնը նաև հայոց եկեղեցու համար գումարել ազգային-եկեղեցական ժողով, սակայն կարելի է ասել, որ ազգային-եկեղեցական ժողով այն մտքով և բովանդակութեամբ, որ մենք ունեցել ենք հնումն, այսինքն ժողովներ, որոնք եղել են սահմանադիր, մշակել և հրատարակել են օրէնքներ եկեղեցուն վերաբերեալ, մենք չենք ունեցել վերջին դարերում։ Ճիշդ է, եղել են էջմիածնում ազգային-եկեղեցական ժողովներ, բայց միայն կաթողիկոսական ընտրութիւնների համար, այնպէս որ այդ ժողովները եղել են գրեթէ բացառապէս ընտրական, այլ ոչ սահմանադիր կամ օրէնսդրական։

Իսկ սահմանադիր կամ օրէնսդրական ազգային-եկեղեցական ժողովի անհրաժեշտութիւնը վաղուց զգալի է և հրամայողական պահանջ է դարձել։

Մեր եկեղեցին՝ որքան և առաքելական, ժողովրդական, բայց շատ պարագաներում շեղվել է առաքելական և աւետարանական շաւղից. նրա մէջ մտել են շատ զեղծումներ, անկանոնութիւններ. չափազանց ձևականութիւնը, տառակերութիւնը, արտաքինի պաշտումը ի վնաս ներքին պաշտաման՝ դարձել է սովորական երևոյթ։ Հոգևորականութեան բարոյական մակարդակը ընկել է, պաշտվում և յարգվում է ոչ թէ Աւետարանի ներքին իմաստը, այլ նրա արտաքին կեղևը, կազմը։ Եւ այդպիսի չոր ու ցամաք ձևականութեան, ձևապաշտութեան հետևանքն այն է լինում,

Հարկաւոր է աւելի սերտ, մտերմական կապ հաստատել եկեղեցու և ժողովրդի միջև. հարկաւոր է բարձրացնել հոգևորականութեան բարոյական կերպարանքը, որպէսզի եկեղեցականը ձգտէ ոչ թէ կարիերիստ պաշտօնեայ լինելու, այլ Աւետարանի ճշմարիտ աշակերտ և առաքեալ։

Եւ ահա ազգային-եկեղեցական ժողովի մէջ պէտք է թնդայ հայրապետների ձայնը և պատուիրանը, որ ստիպէ հետամուտներին ըմբռնել, թէ հոգևորականութեան կոչումն ստանձնողը պէտք է առաջուց ձեռք քաշէ կարիերից, աստիճաններից, փառքից և շուքից և ծառայէ, սպասաւորէ միայն ժողովրդին։

Անշուշտ, ներկայ պայմաններում դժուար է եկեղեցական ժողով գումարել անմիջապէս. բայց կարելի է ձեռնարկել նախապատրաստական գործողութիւնների, մշակել օրակարգի հարցերը, իսկ այդ ամէնը կը պահանջէ երկար ժամանակ, գուցէ տարիներ։

Ներկայ Վեհ. Կաթողիկոսը, որ հետամուտ է, անշուշտ, հայոց եկեղեցին բարեկարգ տեսնել, պէտք է ձեռնարկէ անհրաժեշտ նախապատրաստական գործողութիւններին և աշխատէ իր օրով իրագործել ազգային-եկեղեցական ժողովի գումարումը։

Հ. Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԷՐԶՐՈՒՄ ԵՒ ԻՐ ԲԵՐԴԵՐԸ

I

Լեռներու և բլուրներու շարք մը պայտի ձևով կը շրջապատեն Էրզրում քաղաքը։

Քաղաքին միայն արևմտեան հիւսիսային կողմը բաց է և ընդարձակածաւալ դաշտին կը խառնուի։ Իսկ միւս բոլոր շրջափակուած կողմերու բարձունքներուն վրայ շարքով կերևին հին ու նոր ռազմական ամրութիւններ։

Սոյն ամրութեանց կեդրոնը ցցուած են Դէվէ-Բօյնուի բերդերը, և ապա անոնց աջ ու ձախ կողմի շարքերը աստիճանաբար երկու կողմէն կընդգրկեն քաղաքը։ Զինուորականներու երբեմնի խօսակցութեան համաձայն, բոլոր այս դիրքերը՝ 18-ական վերստ իրարմէ համաչափ հեռաւորութիւն ունին, այնպէս որ հաւասար հեռաւորութեամբ շարուած այս թնդանօթները (պատերազմէն առաջ) ի հարկին պիտի կրնային զիրար պաշտպանել և այդպիսով քաղաքին շուրջ պարիսպ մը ձևացնել։

Այսինքն պարիսպ մը, որ՝ ինչպէս դիւրին է ըմբռնել՝ 36 վերստ տրամագիծ կունենայ՝ մէկ կողմէն հսկելով դէպի քաղաքին անմիջապէս շրջակայքը՝ 18 վերստի վրայ, իսկ միւս կողմէն նոյնքան հեռաւորութեամբ կռնակէն եկող թշնամիին վրայ։

Այստեղ կարգաւ պիտի յիշենք քաղաքէն ելլող իւրաքանչիւր պողոտային և անոր սպառնացող բերդին անունը։

Էրզրումը մօտաւորապէս 13,000*) տուն բնակչութիւնով լայնածաւալ քաղաք մըն է, որուն շուրջը կայ հինէն փորուած խրամատ մը։ Այս խրամատէն չորս դռներէն դուրս կուգայ քաղաքին ամփոփ չորս գլխաւոր ճանապարհները։

ա) Կարսայ դուռ, ուրկէ անցնող ճանապարհը կը բարձրանայ ուղղակի դէպի արևելք՝ Դէվէ-Բօյնուի կիրճը, և ապա երկուստեք հսկող բերդերուն առջևէն խոնարհած կիջնէ այս անգամ Հասան-Կալէի դաշտը, յետոյ կը մտնէ Հասան-Կալէ և Քեօփրի-Քեօյ և այլն։

բ) Խարբերդի դուռ կոչուած հարաւային դրան անմիջապէս առջևը երկու ճանապարհ կը ճղուի. մին կը բարձրանայ դէպի Փալան-Թօքեանի կիրճը, ուր կան համանուն ամրոցներու շարքերը. այդ ճանապարհը կերթայ դէպի Խնուս։ Իսկ երկրորդ ճիւղը անցնելով Ալրամ Իղլի-Թաբեալար անուն ամրոցներուն առջևէն՝ կուղղուի դէպի Խարբերդի կողմի նահանգները։

գ) Իլիջայի դուռը, որուն կըսուի նաև Պօլսոյ դուռ. ասկից դուրս կուգայ դէպի արևմուտք գացող Թիւրքիոյ ամենականոնաւոր խճուղին, որուն մէկ ճիւղը կը յանգի Տրապիզոնի ծովեզրին, իսկ միւսը Երզնկայի (Երզնկա), ուր զօրաբանակի կեդրոնն էր*)։

դ) Կանա-դուռը, ուրկէ դէպի հիւսիս եկող մեծ պողոտան՝ թէ դէպի սարերը և թէ դէպի դաշտի գիւղերը բազմաթիւ ճիւղեր կարձակէ։ Այս կողմէն ճանապարհներ կուղղուին դէպի Թորթում, Սպեր, Նարման, Օլթի և այլն։

Հոս կը հսկեն՝ շարքով քաղաքին մօտէն սկսեալ ուղղակի դէպի Կովկասի սահմանը՝ հետևեալ ամրոցները՝ Ազիզիէ, Մէջիդիէ, Սիվիշլի և Նիխախ անուններով։ Այս վերջինները 1878 թ. պատերազմէն առաջ ալ կառուցուած կային, որոնք հետզհետէ կատարելագործուեցան։ Իսկ Դէվէ-Բօյնուի և Փալան-Թօքեանի ամրութիւնները 1885-էն սկսեալ նախ անգլիացի և ապա գերմանացի ինժեներներու միջոցաւ կառուցուեցան։

Քաղաքէն 10—18 վերստ հեռաւորութեան վրայի այս դիրքերու շրջափակէն զատ, ուղղակի քաղաքի դռներն ունին իրենց յատուկ ամրութիւնները և պարսպամիջի թնդանօթները։

II

Պատմական

Ըստ յունական պատմիչներու՝ Էրզրումի ամենահին անունն եղած է Գարանիդիդէ (Պիլինիոս) կամ Գարանիտիս (Ստրաբոն). ապա Թէոդոսուպոլիս կամ Թէոդուպոլիս, ինչպէս որ կանուանեն մեր նախահայր պատմիչները։

Անոնք փաստերով ցոյց կուտան մեզ, որ V դարուն Թէոդոս Կրտսեր կայսրը առաջին անգամ նշանաւոր քաղաքի կը վերածէ Էրզրումի հին տեղը և իր անուամբը կը յորջորջէ զայն Թէոդուպոլիս։ Այս առթիւ նոյն կայսրը Սահակ կաթողիկոսին ուղղած իր թղթոյն մէջ կը գրէ. «Հրամայեցաք քաղաք շինել յաշխարհիդ հայոց յապահովութիւն ձեզ մերոց զօրաց» (ընդդէմ պարսից)։

Անատոլիոս զօրավարը կը սկսի և կը լրացնէ քաղաքին ամբողջ կառուցումը։ Ան կը զարդարէ և կամրացնէ զայն՝ աշտարակներով, խրամատներով, նաւացռկաձև աշտարակներով և գոգաւոր խորշերով. երկու հատ կլորաձև աշտարակներ կը կառուցանէ քաղաքին արևելեան և արևմտեան ծայրը (իրաւամբ մինչև այսօր նոյն տեղերը կը գտնուին հնամենի աշտարակներ...), ինչպէս և քաղաքին մէջ բարձրաբերձ մթերանոց։ (Թերևս նոյն մթերանոցն ըլլայ այսաւուր Չէֆթէ-մինարէ կոչուած հսկայ շէնքը, որ շատերը յետագայ նորոգութիւններն առնելով՝ ուրիշ տիրապետող ազգերու գործ կը համարեն։ Այսօր այդ շէնքը իբրև ռազմամթերքի ամբարանոց կը ծառայէր թիւրքերուն)։

Էրզրում կը գումարուի 629-ին եկեղեց. ժողովը, Հերակլ կայսեր օրով։ Մերթ պարսից և մերթ յունաց ձեռքը կը մնայ քաղաքը, մինչև որ Փոկաս կայսեր օրով պարսից Խօսրով Թագաւորի հրամանով VII դարու մէջերը Աշոտ անուն մէկը կը տիրապետէ քաղաքին 3 տարի։ Ապա սարակինոսներու յարձակման չդիմանալով՝ Աշոտ ծերունի Յովհան կաթողիկոսին և բնակչաց մէկ մասին հետ կը փախչի Համադան։

755-ին յոյնք նորէն ձեռք կը ձգեն այս քաղաքը։

Ապա Եզիդ ոստիկանը կը տիրապետէ. 807-ին սով. 950-ին Կոստանդին Պէրփիրուժէն՝ Զմշկիկ զօրավարին միջոցաւ ամրութիւնները քանդելով կը տիրապետէ։ Յետոյ նորէն այլազգիներու գրաւումը։

1019-ին Վասիլ կայսրը ետ կառնէ Էրզրումը և Նիկոդիմեանը իշխան կը կարգէ հոն։

1237-ին Խորազմին կը տիրապետէ Էրզրումին։

XIII դարուն վրայ Թամարա թագուհիին երկու հայազգի եղբայր զօրավարները՝ Զաքարիա և Իվան Էրզրումի սուլթանը հարկատու կը դարձնեն իրենց։

Նոյն տարին (Հիջրէթի 639-ին) մօնղօլ-թաթարները Բաջաղուլ զօրավարով ահարկու արշաւանք կը գործեն Էրզրումին վրայ և հիմնայատակ կը կործանեն զայն, իսկ հայ և թիւրք բնակիչները առ հասարակ կը սպաննեն, ցիրուցան կընեն։ Ապա ժամանակ անցնելէ յետոյ՝ Սարգիս եպիսկոպո-

---

*) Հայերը՝ բոլոր յարանուանութիւններով 4000 տուն կը հաշուուէին մօտաւորապէս։

*) Այս ճանապարհը ապառ դաշտին մէջ դուրս կուգայ, և անոր վրայ հսկող բերդերը ուղղակի իր դրան կից են։

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի, յունվարի 25-ին
Հայոց Դրամատիկ Ընկերութիւն
ՀԱՅ ԴՐԱՄԱՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Բարեհաճ մասնակցութեամբ ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆԻ
Հայոց Դրամատիկ Ընկերութեան ԳԱԼԱ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
Կը ներկայացնէ
ԻՍՐԱՅԷԼ
Դրամա 3 արար. Ա. Բերնշտայնի, Թարգմ. Զարաֆեանի
Վերջը ԶԱՒԷՇՏ
Սկիզբը երեկ. ժամը ճիշդ 8-ին։ | Տեղերի գները բենեֆիսային են։
Կասսան բաց է ամենայն օր ժամը 10-ից մինչև 2-ը, երեկոյեան ժամը 6—8-ը։
Ռեժիսսեօր՝ ՍԵՒՌՈՒՄԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Վ. Մամուլեան և Զմշկեան
ԱԶԴ.—Հետևեալ հերթական ներկայացումը, երկուշաբթի, փետրվարի 1-ի փոխարէն կը կայանայ ուրբաթ, յունվարի 29-ին։ 74. 1—1

Թիֆլիսի Ժողովարան
Այսօր, կիրակի, յունվարի 24-ին տեղի կունենայ
ՀԱՄԵՐԳ
Իտալական օպերայի յայտնի երգչուհի
Կարմէն Մօլեարի
(Սոպրանօ)
Մասնակցութեամբ Կայսեր. թատրոնների նախկին երգիչ Ր. Ֆ. ԲԵՐՆԱՐԴԻԻ (բարիտօն), դաշնակահարուհի Ա. Օ. Նեմէտտիի և լարանուագ խմբի։
Սկիզբը երեկ. ժամը 9-ին։
Տոմսակները 30 կ.-ից—1 ր.։
Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ ակումբի մուտքի համար վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կոպէկ։ 76. 1—1

Այսօր, կիրակի, յունվարի 24-ին
Արշին մալ-ալան Երկու անգամ
ժամը 5-ից և ժամը $8^{1}/_{2}$-ից։
Հաւլաբարի թատրոն
— ՀԱՒԼԱԲԱՐ «ՊԱԼԱՍ» —
Ժողովրդի խնդրանօք դարձեալ կը ներկայացվի ՈՒԶԷԻՐ-ԲԷԳ ՀԱՋԻԲԷԳՕՎԻ
Ասիական ուրախ օպերէտը
Արշին մալ ալան
4 գործ.
Որ գտնէ այս անգամ բաւարարութիւն տըվի պիէսը չը տեսած և դուրսը մնացած հասարակութեանը, և որ խումբը շուտով մեկնում է Թիֆլիսից, խաղացվում է երկու անգամ
I-ը ճիշդ ժամը 5-ից,
II-ը ճիշդ ժամը $8^{1}/_{2}$-ից։
Տոմսակների գները սովորական են և վաճառվում են թատրօնի կասսայում։
Խմբի լիազօրներ՝
Բերոյեան, Ղազարեան և Փիրումեան
ԱԶԴ.—Չորեքշաբթի, յունվարի 27-ին, նոյն պիէսը խումբը խաղում է Արտիստական Ընկերութեան դահլիճում ժամը ճիշդ 9-ից։

ռին*) հրաման կը տրուի, որ գաղթողները հաւաքելով քաղաքը վերականգնէ։

Վերջապէս 1735-ին Էրզրումի մէջ կընքուեցաւ պարսից և օսմանցոց դաշնագրութիւնը։

Իսկ 1878-ին ռուսաց տիրապետութեան և ապա հաշտութեամբ Էրզրումը օսմանցոց թողնելու պարագան դեռ հինցած պատմութիւն չէր այնքան, երբ այսօր ահա՝ այս տողերը գրուած պահուն՝ ակնապիշ կը սպասենք Էրզրումի ամրութեանց վրայ յարձակող ռուս բանակին յաղթական ելնելու լուրին։

Էրզրումի նահանգը ունեցած է ինը գաւառներ՝ Դարանաղի, Մանանաղի, Աւիծ, Մնձուր, Եկեղեաց, Դերջան, Սպեր, Շաղգում, որոնք այսօր երկու ընդհանուր բաժանում ունէին, Երզնկայի և Բայազիդի միւթէսարրըֆութիւնները, որոնց մեծ մասին արդէն ռուսները տիրապետած են։

Գաղթական

ՀԱՅԵՐԸ

(Յօդուած Ժ. դը-Մորգանի)

(«L'Eclair», 12 յունվ.)

Տրոյական պատերազմի դարաշրջանին մօտ, գալով Թրակիայից և աւելի հեռուից, հայերը անցնելով, Բոսֆորը կամ Հելլեսպոնտը, եկան հաստատվելու Կիլիկիայում։ Ապա Ասորեստանի ինքնակալութեան անկումից մի քիչ առաջ, նրանք գաղթեցին դէպի Արարատ։ Վանի բնիկ թագաւորութիւնը (Ուրարտուն) այդ ժամանակ անհետացել էր։ Արդէն, պարսից Աքեմենեանների օրով, Հայաստանը համարվում էր արքայից արքային հպատակ- ժողովուրդներից մինը։ Ալեքսանդր-Մեծից յետոյ, Մեծ-Հայաստանի (Արարատի) թագաւորութիւնը անկախ դարձաւ, իսկ Փոքր-Հայաստանի (Կիլիկիայի) թագաւորութիւնն աւելի շատ ուշ կազմվեց և անհետացաւ խաչակիրներից մի քիչ յետոյ։ Անի քաղաքի առումը մուսուլման Ջալալէդդինի ձեռքով XIII դարում՝ վերջ դրեց Մեծ-Հայաստանի թագաւորութեան։

Այս է մի քանի խօսքով հայկական անկախութեան պատմութիւնը։

Այդ օրից, ինչպէս իրանց հայրենիքից զրկված բոլոր մարդիկ, հայերը ցիրուցան եղան և բնակութիւն հաստատեցին բոլոր այն կէտերում, ուր կարող էին իրանց ապրուստը ճարել։ Շատերը վեր եկան դէպի Կովկաս և հաստատվեցին Թիֆլիս, Բագու քաղաքներում. ուրիշները գնացին Պարսկաստան, և օսմանեան կայսրութեան բոլոր քաղաքները։ Վերջապէս նրանք հիմնեցին գաղութներ Մօսկվա, Պետրօգրադ, Պարիզ, Վիեննա, Լօնդօն, Նիւ-Եօրկ, Կալկաթա, մինչ ազգի մեծամասնութիւնը մնում էր կապած իր հողին թէ Մեծ-Հայաստանում և թէ Կիլիկիայում, ենթակայ քիւրդերի և թիւրքերի հարստահարութիւններին։

Անդրկովկասի նուաճումը ռուսների ձեռքով և Թիւրքմէնչայի դաշնագիրը (1827 թ.) տուեց ռուսներին Մեծ-Հայաստանի ամբողջ հիւսիսը՝ Էջմիածնի (Վաղարշապատի) հետ միասին, որ օրթօդօքս հայերի Հռոմն է, և նախկին մայրաքաղաք՝ Անիի աւերակները։ Դա արդէն մի ապաստան էր մուսուլման բարբարոսութեան դէմ։

Թիւրքիայում, հայերը, իրանց վարչական մեծ տաղանդի շնորհիւ, ստեղծեցին ազգօրէն կարևոր դրութիւն և դարձան անհրաժեշտ։ Բայց այդ աջողութիւնը խրախուսելով նրանց, նրանք թոյլ տուին ցոյց տալ իրանց յոյսը անկախութեան մասին։ Տիրապետող թիւրքը, այդ օրից, նրանց կասկածով վերաբերվեց։ Այդ ժամանակ էր, որ արտասահմանեան մի քանի հայեր յիմարութիւն ունեցան գործել բռնութիւններ (Օսմանեան-Բանկի դէպքը), ուստի և սուլթանը հրամանագրեց առաջին կոտորածները։ Հայը այդ օրից դարձաւ մարտիրոս, որին Ալլահը մատնել էր բարի մուսուլմանների բարկութեան։ Ծնողները սովորեցնում էին իրանց երեխաներին խաղալ «Հայերի կոտորածը»։ Քիւրդերը և թիւրքերը ցնծութեամբ անձնատուր եղան այդ գործին։ Անգլիան, Ամերիկան, Ֆրանսիան, Ռուսաստանը բողոքեցին Բ. Դռան առաջ։ Բայց այդ բողոքներն աւելի ծանրացրին հայերի վիճակը։ Այն օրը երբ պատերազմը ծագեց, Կ. Պօլսում երդվեցին ջնջել մինչև վերջինը այդ դժբաղդ հայերին, և Գերմանիան հետամուտ չեղաւ բնաւ միջամտել, որովհետև այդ ժողովուրդը, կաթոլիկ թէ օրթօդօքս, իր կլիէնտը չէր, այլ համաձայնութեան պետութիւնների պաշտպանեալը։

Այժմ, բարեբաղդաբար, ռուսները իջան մինչև Վանի լիճը և դրանով փրկեցին ամբողջ Մեծ Հայաստանի կենտրոնի ժողովուրդը։ Ինչ վերաբերում է ուրիշ տեղերի՝ Տրապիզօնի, Սամսօնի, Սինօպի, Բիթլիսի, Դիարբէքիրի, Ուրֆայի, Ադանայի և այլ վայրերի հայերին, թիւրքերն այդտեղ դարհուրելի սպանդանոց դարձրին։ 15,000 հոգի սպանվել են Տրապիզօնում, 11,000 Ադանայում։ Սպանվածների թիւը մի միլիօն են հաշւում, իսկ կանայք և երեխաները ծախվել են իբրև ստրուկ և ստիպվել իսլամութիւն ընդունելու։ Անհնարին է երևակայել գործված սարսափները։ Միտքը անզօր է։ Եւ այդ ոճիրի, պատասխանատուն Գերմանիան է մարդկութեան առաջ, որովհետև բաւական էր Վիլհելմ II-ի մի խօսքը՝ դադարեցնելու պատանցող թիւրքի գազանութիւնը։ Ահա ինչն են անուանում երիտասարդ թիւրքերը «ազատամտութիւն»։

. . . . .

Մաղթենք, որ դաշնակիցները վերահաստատեն իրանք ևս մի օր Լուսինեանների պետութիւնը և վերադարձնեն վեց դարերից ի վեր այդ մարտիրոս ժողովրդին մի ապաստան, ուր նա կարողանայ ասել՝ «Ես իմ տանն եմ» և ուր կարողանայ հաւաքել իր նախնիքների յիշատակարանների մնացորդները։

ԿՕՆԱՆ-ԴՕՅԼԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍՆԵՐԻՆ

Անգլիացի յայտնի գրող Արտուր Կօնան-Դօյլը իր ռուս բարեկամներին դիմել է մի կոչով, որի մէջ նա մատնանշում է Անգլիայի դերը և նշանակութիւնը ներկայ պատերազմի ժամանակ։

Այս կոչը գրել է նրա համար, որ թշնամիները տարածում են սուտ լուրեր այն մասին, թէ Մեծ-Բրիտանիան իր բոլոր ոյժերը չի լարում պատերազմի շուտափոյթ և յաղթական կերպով աւարտման համար։ Ծանօթացնելով Անգլիայի դերին ծովի և ցամաքի վրա պատերազմի ժամանակ, Կօնան-Դօյլը յայտնում է, որ Մեծ-Բրիտանիան ոչ մի ժամանակ չի համաձայնի ոչ մի կոմպրոմիսի։

«Մենք պէտք է յաղթութիւն տանենք,— ասում է Կօնան-Դօյլը,—որքան էլ սուղ կռիւը դրա համար։ Բրիտանական ոչ մի կառավարութիւն երբեք չի համաձայնի պակասին. իսկ եթէ գտնվի մի այդպիսի կառավարութիւն, նա անմիջապէս կը տապալվի և նրա տեղը կը բռնեն հոգով աւելի ուժեղ մարդիկ։ Մենք պէտք է յաղթենք, ինչ էլ որ լինի։ Յաղթութիւն ասելով մենք չենք հասկանում Գերմանիայի ոչնչացումը, կամ նրա բաժանումը, ինչպէս գերմանական թերթերն են հաւատացնում։ Չէ կարելի վերացնել մեծ ազգի գոյութիւնը. յաղթութիւն ասելով մենք հասկանում ենք այն, որ Գերմանիան հարկադրվի հատուցել իր կատարած չարագործութիւնների համար, իսկ միւս կողմից ստացվի յուսալի երաշխաւորութիւն, որ ապագայում նա չի կրկնի նման բան։ Այս է մեր նպատակը և երբ մենք հասնենք նրան (իսկ մենք անպայման կը հասնենք) շնորհիւ մեր ընդհանուր ջանքերի, այն ժամանակ, ես հաւատացած եմ, կը մնայ մի ընդհանուր մեծ հետևանք ներկայ պատերազմից. այն է՝ ռուսները, ֆրանսիացիք և բրիտանացիք միշտ կը պահեն իրանց յիշողութեան մէջ իրանց ներկայ արեամբ գնված, եղբայրութեան մասին, և երբեք ոչ ոքի թոյլ չեն տայ տարաձայնութիւն սերմանելու իրանց մէջ ապագայում։ Այս պատերազմին թափված բոլոր արիւնն ու արցունքը արդարացնում են իրանց, եթէ նրանք իսկապէս կը յանգեն այդպիսի հետևանքի։

ԴԷՊԻ ԷՐԶՐՈՒՄ

Թիֆլիսից «Рус. Сл.»-ին գրում են.

«Էրզրումի շրջանից դէպի հիւսիս թիւրքերի նահանջումը շարունակվում է։

«Վճռական կռիւը, որից յետոյ մենք գրաւեցինք Խնուս-Կալէն, ինչպէս երևում է, տեղի է ունեցել ոչ թէ Խնուս-Կալէի մօտ, այլ 20 վերստ դէպի արևելք, Կարա-Բէօփրի գիւղի մօտ, որտեղ Մանազկերտից մեր եռանդուն և անընդհատ յարձակումից նահանջող թիւրքական նշանաւոր ոյժերը գրաւեցին ամուր դիրք և աշխատեցին կանգնեցնել մեզ։ Սակայն չը նայած եռանդուն պաշտպանութեան, թշնամին տեղահան արվեց և առանց կանգ առնելու սկսեց նահանջել դէպի Խնուս-Կալէ, ուր մենք մտանք նրանց թիկունքից։

«Հաղորդում են յունվարի 12-ին Էրզրումի ամրութիւններից թիւրքերի դուրս գալու մանրամասնութիւնը։

«Թիւրքերը դուրս եկան Դէվէ-Բօյնու բերդի կենտրոնական ամրութիւններից։ Ամրութիւնների արտիլերիան իր կրակով աջակցում էր դուրս եկած գնդերին։

«Բայց թիւրքերը դեռ չէին կարողացել, ինչպէս կարգն է, դասաւորվել, երբ մեր առաջաւոր զօրամասերը դիմեցին հակայարձակման, ետ շպրտեցին թիւրքերին և սարսափահար փախուստի դարձրին նրանց և տիրեցին թիւրքական մի շարք գիւղեր, գերի վերցնելով 40 հոգուց աւելի, դրանց թւում և գնդի հրամանատարին»։

«Правит. Вѣстникъ» ընդգծում է, որ կովկասեան զօրաճակատի վրա Ճորոխի ուղղութեամբ առաջանալը և թիւրքերին Թօրթումի շրջանում հետապնդելը ցոյց են տալիս, որ գործողութիւններին մասնակցել են Ճորոխի երկրում, ի մի առած Օլթիչայի և Թօրթում-գեօլի շրջանները, առանձին մի քանի թիւրքական զօրամասեր։ Պաշտպանվելով և հնարաւորութիւն չունենալով հասնել Էրզրումին, թիւրքերը նահանջում էին մի քանի ուղղութեամբ, հաւանօրէն դէպի Սպեր քաղաքը, որ գտնվում է Էրզրումից 70 վերստ հեռու դէպի հիւսիս-արևմուտք։ Վանի շրջանում մեր աջողութիւնը աւելի դժուարին դրութեան մէջ է դնում թիւրքերին, որոնք նահանջում են Խնուս-Կալէի մօտից դէպի Մուշ, որովհետև մեզ ճանապարհ է բանում դէպի Մուշի թիկունքը։ Մանազկերտի շրջանում թիւրքերի կրած ջարդը առաջ է բերում աւելի դժուարին կացութիւն թիւրքերի համար։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են. «Բէլգրադի աւստրիական նահանգապետը յայտնեց ամերիկեան հիւպատոսին, որ նրա ներկայութիւնը Բէլգրադում անօգուտ է, որովհետև Սերբիան իբրև ինքնուրոյն պետութիւն այլևս գոյութիւն չունի։ Հիւպատոսը մեկնել է Վիեննա՝ հրահանգ խնդրելու իր կառավարութիւնից»։

◆ Բացվել է երկաթուղային ուղղակի հաղորդակցութիւն Վարշավայի և Բուդապեշտի միջև։ Ճանապարհը 20 ժամ է։

◆ Աւստրիական պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է, որ Ալէսիօ նաւահանգիստը գրաւված է։

◆ «Русскій Инвалидъ» նկատում է, որ գերմանացիք ներկայումս վճռել են ըստ երևոյթին առաջվայ նման պաշտպանվել ֆրանս-անգլիական զօրքերի դէմ, իսկ մեր զօրաճակատի վրա դիմել գլխաւոր գործողութիւններին։

◆ Բեռլինից տեղեկացնում են, որ իտալացիք արդէն հեռանում են Դուրացցօյից, կենտրոնանալով գլխաւորապէս Վալօնում։

◆ Ինչպէս հաղորդում են „Р. В.“-ին, Ռումինիան պատերազմական գործողութիւններ սկսելու է փետրվարից։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Պետրօգրադի Հեռագր. Գործ.)

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

22 յունվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտ.։ Գեր. Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան զօրաճակատի վրա, չը նայած ճանապարհների բացարձակ բացակայութեան, մեր զօրքերը շարունակում են հետապնդել հակառակորդին ժայռի ի վեր խոր կիրճերով ու ձիւնախառն մրրկի մէջ։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

22 յունվ.

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտ.։ Գեր. Զօրահրամանատարի շտաբի կողմից։

Պլականէնի շրջանում, Միտավայի խճուղուց դէպի արևելք, մեր մի խումբ հետախոյզներ ցիրուցան արին գերմանացիներին ձեռքի ռումբերով և առանց կորուստների վերադարձան։

Իկսկիւլից դէպի հարաւ գերմանացիք գիշերով փորձեցին աշխատանքներ կատարել Դվինայի վրա, բայց մեր կրակը ցիրուցան արաւ նրանց։

Նարօչ լճից դէպի հիւսիս մեր օդագնացները, չը նայած թշնամու ուժեղ կրակին, ռմբակոծեցին թշնամու դիրքերը և աջողութեամբ վերադարձան։

Դուբնօյից դէպի հարաւ աւստրիացիք գործադրում են մի առանձին գործիք՝ յարձակումները վանելու համար արձակելով բոց 30—40 մետր հեռաւորութեան վրա։

Միջին Ստրիպի զօրաճակատի վրա մեր օդագնացը ռումբեր նետեց Էզերնա կայարանի և կայարանում կանգնած վագոնների վրա։

Դնեստրի մօտ հակառակորդը շարունակում է ռմբակոծել մեր խրամատները ծանր թնդանօթներից։

Չերնօվիցից դէպի հիւսիս-արևելք մեր ծանր թնդանօթների կրակը աէրօպլանների օգնութեամբ ռմբակոծեց հակառակորդի հրետանիները Տօպօրօվցէ և Բարանչէ գիւղերը։

Բօյեանից դէպի հիւսիս-արևմուտք մեր հետախոյզները ռումբեր նետեցին թշնամու դիրքի վրա և, վանելով աւստրիացիներին, պայթեցրին երկու ականային անցք, որ մօտենում էր մեր խրամատներին։

ԼՕՆԴՕՆ. — «Փրանց-Ֆիշէր» շոգենաւը ջրասուզվել է «ցէպպելինի» նետած ռումբերից. խեղդվել են 13 հոգի։

ՀԱՒՐ.—Բէլգիական հաղորդագրութիւն.

Զօրաճակատի վրա վերսկսվեց լարված թնդանօթային կռիւ, մանաւանդ Դիկսմիւյէի մօտ։

ԼՕՆԴՕՆ.—Անգլիական գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Ամբողջ երէկվայ օրը թշնամին ուժեղ ռմբակոծութեան ենթարկեց Լօօսը և շրջակայքի խրամատները. մենք աջողութեամբ պատասխանում ենք թշնամու կրակին, Լա-Բասսէի մօտ տեղի էր ունենում ականային կռիւ։

Ծովակալութիւնը հաղորդում է, որ Հիւսիսային ծովում երևացել է «ցէպպելին»։

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Լագարինօ հովտում յունվ. 18-ին մեր հետախոյզները թնդանօթային կրակի պաշտպանութեամբ ցիրուցան արին թշնամուն ծովից դէպի հիւսիս-արևմուտք։

Աստիկօ և Տօրրէ շրջաններում թշնամին յունվ. 19-ին սպիտակ թիկնոցներով, գնդակացիրային կրակի պաշտպանութեամբ մօտեցաւ մեր դիրքերին, բայց մեր հակայարձակումից վանվեց։

Սուգանօ հովտում մեր հետիոտն գնդերը նորից ընդհարվեցին թշնամու հետ։

Իզոնցօում տեղի էր ունենում թնդանօթաձգութիւն ընդմիջումներով։

Կարսօում մեր զօրամասերից մինը ներս խուժեց անակնկալ թշնամու խրամատները, գերեց մի քանի հոգի և ձեռք ձգեց ձեռքի ռումբեր ու հրացաններ։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

22 յունվարի

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Համաձայն Կ. Պօլսից ըստացված պաշտօնական հեռագրերի, գահաժառանգ Եուսուֆ-Իզզէդդինի ինքնասպանութիւնը տեղի է ունեցել նրա պալատում Բեռլին մեկնելուց առաջ, ուր նա մտադիր էր բժշկվել իր տկարութիւնից։

Բուխարեստի թիւրքական շրջաններում համոզված են, որ այդ մահը հանդիսանում

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՆՈՒԹԻՒՆ

(Վալէրի Բրիւսովից)

Նահանջիր, որպէս ծով, ցերեկի անամէջ, ընդունայն խառնում,
Մենութիւն, կանգնիր լուռ, լուսնի պէս լուռ կանգնիր և իմ ժամը հսկիր.
Լսում եմ՝ տեղատու ջրերում քարերն են, քարերն են որոտում,
Տեսնում եմ՝ մայրամուտի կաս-կարմիր մշուշն է ծխանում ցանուցիր։

Մերթ ալմաստ թագերով շողշողուն, մերթ ծաղկէ պսակով լուսեղէն,
Մերթ հարճի հագուստով խղճալի, մերթ ծիրան-ծածկոցով թագուհու,
Մերթ խնդուն հողմի պէս գարնային, մերթ անհուն տանջանքից յոգնաբեկ՝
Դառնում են խմբովին, օրօրվում, դառնում են այն կոյսերը հեռու...

Ձեր հայեացքը դգվող է նորից, ձեր քայլուածքը նորից օրօրուն,
Ուրեմն նոյնն եմ ես, եթէ ինձ, եթէ ետ է դառնում աշխարհն այն։
Մօտեցէք, ես ձեզ չեմ մոռացել, իմ քոյրեր, փոփոխուն օրերում,
Իմ քոյրեր, ոչ ոքի չեմ յայտնի անուններդ յաւէտ սրբազան։

Ձեր քնքոյշ մատներին կը սեղմեմ, կը սեղմեմ բիբերս բորբոքուն,
Իմ գլուխս յոգնած կը դնեմ, կը դնեմ կրծքերին ձեր ծանօթ,
Քնքշագին, քնքշագին իմ քոյրեր, մանկուց եմ ընդունել ես երդում՝
Լոկ ձեզ հետ լինում եմ երջանիկ, հարազատ եմ լինում լոկ ձեզ մօտ։

Հանդարտվում են, մեռնում ու լռում ալիքներն ահաւոր ու խառն,
Լուսնեակի ճաճանչներն օձեղէն խաղում են ու մարում դողդոջուն,
Ու քոյրս թեքվել է իմ վրա և յուշիկ և յուշիկ խօսքերով
Թոթովում է անուշ ու պատմում՝ մեր անջատ տարիներն է յիշում։

Վահան Տէրեան

ՊՐԻՆՑՈՒՀԻ ՆԱ

Ախ, Բուզուլուկ քաղաքում
Նստած ես հիմա—
Ինձ ես մընում դու անքուն,
Օ, պրինցուհի Նա։

Ինձ ես անվերջ երազում
Փայտեղէն այդ դղեակում,
Եւ գիշերն է արտասվում
Քո Բուզուլուկ քաղաքում...

Ես չեմ, քամին է բախում
Դուռ ու լուսամուտ.
Քուն դիր սիրտըդ բաբախուն
Եւ աչքըդ անհուն։

Երազներով միամիտ
Տխրանուշ ու նուազուն
Ինձ ես պարզել որբ հոգիդ
Քո Բուզուլուկ քաղաքում։

Շուտով արևն այդ միգում
Ցերեկ կը բանայ.
Իսկ դու նստած ես անքուն
Օ, պրինցուհի Նա...

Վահան Տէրեան

---

*) Էրզրումին մէջ մինչև վերջերս նոյն կղերականին չինարար գործը հայեր և թիւրքեր աւանդօրէն կը պատմէին։

է երիտասարդ-Թիւրքերի կոմիտէտի բազմաթիւ ոճիրներից մէկը, կոմիտէտի, որի գործունէութիւնը քօղարկված է մռայլ արիւնալի գաղտնիքով։ Այդ առիթով հարկ է յիշել, որ Եուսուֆ-Իզզէդդինը յայտնի էր դէպի Անգլիան տածած իր համակրութեամբ և թշնամաբար էր վերաբերվում երիտասարդ-Թիւրքերի քաղաքականութեանն առ հասարակ, և մասնաւորապէս ներկայ պատերազմի մէջ Թիւրքերի մասնակցութեանը։ Կ. Պօլսից հաղորդում են, որ «Օսմանիշէր-Լլօյդ» լրագիրը ջանում է հանգստացնել Թիւրքիայի հասարակական կարծիքը, որ յուզված է ռուս զօրքերի առաջխաղացումից Բուկօվինա-Գալիցիա զօրաճակատի վրա, ըստ որում սփոփում է այն յոյսով, թէ ռուսների շեշտակի արշաւանքը շուտով կը կանգնեցվի։

Գերմանացիք և աւստրիացիք շարունակում են Կ. Պօլիս ուղարկել ռուսական և ֆրանսիական գերի մահմեդականներին։

ՕԴԵՍՍԱ.—Պետական Խորհրդի անդամ Սուխոմլինովի նախագահութեամբ կայացաւ խորհրդակցութիւն, ուր միաձայն որոշվեց հեռագրով խնդրել առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրին, զինուորաարդիւնաբերական կոմիտէտին և համագումարների խորհրդին, որպէսզի Վարշավայի պօլիտեխնիկումը փոխադրվի Օդեսսա, փոխանակ Նիժնի-Նովգորոդ, և այդ նպատակով ուղարկել առանձին պատգամաւորութիւն։

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ.—Պաշտօնական այն հաղորդագրութեան առիթով, թէ «Լուզիտանիան» ջրասուզելու վերաբերմամբ բանակցութիւնները կաւարտվեն մօտիկ ապագայում, «Ֆօսիշէ-Ցայտունգը» ասում է, որ այդ տեղեկութիւնը վաղաժամ է։ Միևնոյն կարծիքին է «Բերլինէր-Տագեբլատը», որ ասում է, թէ ներկայ րոպէին դեռ ոչ մի հիմունք չը կայ յուսալու, թէ գործը կաւարտվի շուտով։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՍԵԴՐԱԿ ԹԱՌԱՅԵԱՆԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք Թիֆլիսում 1) Յովհ. Մալխասեանից 3 ր., 2) Ս. Շահնազարեանից 1 ր., 3) Սուրէն Աֆրիկեանից 5 ր., 4) Խաչ. Աֆրիկեանից 10 ր.։ Ընդամենը 19 ր.։

ՑՈՒՑԱԿ

Տաշկէնցի նուիրատուների

—

(Յօգուտ հայ փախստականների)
(Տես «Մշակ» 1915 թ. № 281)

Մ. Ամիրջանեան 10 ր., Գրիգորեան, Բաղդասարեան, Ա. Բաղդասարեան, Մ. Տէր-Խաչատրեան, Ս. Տէր-Աստուածատրեան, Մ. Աբովեան, սազանդար 3-ական ր., տ. Գրիգորեան 2 ր., Ս. Աղասափեան, Մ. Մեսրոպեան, Ա. Յարութիւնեան, Ս. Ղուլեան, Թ. Բեկնազարեան, Մեսրոպեան, Օ. Տէր-Գաբրիէլեան, Ա. Յօրութեան, Ա. Մելիք-Սարգսեան, Բ. Աւետիսեան, տ. տ. Ծատուրեան, Բաղդասարեան, Գրիգորեան, Տէր-Աստուածատրեան, Բաղդասարեան, Աղասափեան 1-ական ր., տ. տ. Տէր-Խաչատրեան, Բաղդասարեան, Տէր-Գաբրիէլեան, Ասրիկեան 50-ական կ.։ Ընդամենը 50 ր.։

ԽՈՇՈՐ ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ

—

Վալէրի Բրիւսօվի դասախօսութիւնը Բագւում և Թիֆլիսում գրաւեց, ի միջի այլոց, և մի դասակարգ, որ մինչև այժմ չէ հետաքրքրվել ոչ միայն հայ ոտանաւոր գրականութեամբ, այլև առհասարակ հայ գեղարուեստական գրականութեամբ և հայի մտաւոր կեանքով։ Թէ այնտեղ և թէ այստեղ ռուս բանաստեղծի դասախօսութեանը ներկայ եղան մարդիկ, որոնք երբէք իրանց ձեռքը հայ գիրք չեն առել և որոնց համար խորթ է նոյն իսկ մայրենի լեզուն։

Չը գիտեմ ինչ հիման վրա սովորութիւն է ստեղծվել այդ դասակարգն անուանել «ինտելիգենցիա»։ Իսկ մի քանի խելօքներ նորերս Բագուի լրագիրներում նոյն իսկ «բարձր ինտելիգենցիա» անուանն արժանացրին նրան։

Կան թիւրիմացութիւններ, որ որքան ծիծաղելի, նոյնքան և վիրաւորական են։ Ահա այդ թիւրիմացութիւններից մէկն է ինտելիգենցիա համարել այն բարձրագոյն և ոչ բարձրագոյն ուսում ստացած հայերին, որոնք չեն հետաքրքրվում իրանց ազգի մտաւոր կեանքով։ Չը կայ աշխարհի երեսին մի քաղաքակիրթ ազգ, ուր ինտելիգենցիա համարվեն մարդիկ, որոնք անտարբեր են դէպի իրանց ազգի մտաւոր կարողութիւնը։ Իսկ մեր մէջ սովորութիւն է դարձել անխտիր ինտելիգենտ համարել ամենքին, որ այս կամ այն կերպ մի կտոր թուղթ են ձեռք բերել այս կամ այն բարձրագոյն դպրոցից։

Դա մի խոշոր սխալ է, որ ժամանակ է մի անգամ առ միշտ հերքելու և իւրաքանչիւրին իր արժանաւոր տեղը ցոյց տալու։

Մեր իսկական ինտելիգենցիան նա է, որ միշտ հետաքրքրվել է և այժմ էլ հետաքրքրվում է հայ գրականութեամբ, հայ թատրօնով, հայ մամուլով, հայ դպրոցով և բոլոր այն տարրերով, որոնք մեր թէև ոչ հարուստ, բայց և այնպէս մտաւոր ու բարոյական կարողութիւնն են ներկայացնում։

Բոլոր հայազգի պրօֆեսօրները, սկսած Պատկանեանից և Էմինից մինչև Եղիազարեան, Ադոնց և Տօռոմեանց, մեր բոլոր խմբագիրները, նկարիչները, երաժիշտները, ուսուցիչները, դերասանները, հայախօս համալսարանականները միշտ հետաքրքրվել են և հետաքրքրվում են հայ գրականութեամբ։ Ես գիտեմ, որ դրանցից դուրս կայ դիպլօմաւորների մի հոծ բազմութիւն, որ անտարբեր է դէպի իր ազգի մտաւոր կեանքը։ Բայց մի խելքը գլխին և ինքնասէր հայ գրողն է երբևէ հաշւի առել բազմութեան կարծիքը, պահանջը կամ ճաշակը։ Կարող եմ երաշխաւորել հայ գրականութեան կողմից՝ ոչ մէկը։ Հայ գրականութիւնը միշտ արհամարհանքով է պատասխանել այդ դիպլօմաւոր մասսայի արհամարհանքին, խորապէս ճանաչելով նրա փոքրութիւնը բարոյական տեսակէտից։

Ես պէտք է միամիտ երեխայ լինել հաւատալու համար, որ այսուհետև այդ դժգոյն, անճաշակ և անկիրթ մասսան հետաքրքրվելու է հայ գրականութեամբ։ Նա եկաւ Բրիւսօվին լսելու, լսեց հետևեալ օրն իսկ մոռացաւ ամեն ինչ և այսուհետև էլ շարունակելու է երկրպագել իր միակ Աստուծուն—ոսկուն։ Նրա համար չը կայ ոչ հայ և ոչ մի օտար գրականութիւն, նրա համար չը կայ մտաւոր քաղց, կայ միայն որովայնի քաղց։

Ժամանակ է, վերջապէս, վերջ տալու յամառ թիւրիմացութեանը։ Ժամանակ է դադարել ապականելու ինտելիգենցիա կոչումը, արժանացնելով նրան մի ամբոխի, որի բարոյական արժէքը կասկածելի է տակաւին։

Շիրվանզադէ

ՀԻՆ ՎԻՐԱՒՈՐ ՀԱՐՑԸ[*]

(Քննական խոհեր Բրիւսօվի դասախօսութեան առիթով)

II

Բրիւսօվի տուած ծանօթութիւնները միմի յայտնութիւններ էին Բագուի գրեթէ միայն հայերից բաղկացած աուդիտորիայի համար։ Եւ բանաստեղծի քանիցս կրկնած խօսքերը՝ ունկնդիրների հասցէին, որ սրանց ծանօթ կը լինի այս կամ այն բանաստեղծը (օրինակ մի Նահապետ Քուչակ կամ Սայաթ-Նովա և այլն) իր գրուածքներով, կարող էին միայն դառը ժպիտ պատճառել ամեն մէկին, ով իրազեկ է հայ իրականութեան տխուր բովանդակութեանը։

Նաւթային աշխարհի հայ բուրժուական ինտելիգենցիայի հրապարակախօս-իդէօլօգը՝ յանձին Քր. Վերմիշեանի՝ բացարձակ և ճիշդ խոստովանութիւններով յայտարարեց բանկետում, որ ռուս բանաստեղծի նկարագրած գեղեցիկ էջերը հայ պօէզիայի անցեալի մասին՝ մի կատարեալ անծանօթ աշխարհ էր հայ ինտելիգենցիայի համար, որ վերջինս առաջին անգամն է լսում այդ բոլորի մասին և ամօթահար պիտի խոստովանէ օտարի հանդէպ այդ փաստը։

Այս յայտարարութիւնը դուր չեկաւ շատերի քմքին։ Ոմանք սկզբունքով համաձայն չեն Վերմիշեանի հետ՝ փաստի ճշդութեան նկատմամբ։ Ոմանք էլ, համաձայն լինելով, այնուամենայնիւ, դժգոհ են, որ օտարի առաջ յայտարարվում է այդ բացասական փաստը։

Այդ դէպքը հետաքրքրեց նաև օտարներին։ Այսպէս, Ստարցեվը հարց է տալիս հրապարակով («Баку» № 8), թէ իրա՞ւ անգէտ ու անիրազեկ է հայ ինտելիգենցիան իր ազգի գրականութեան, պատմական անցեալի՞։ Եւ ցանկալի է համարում անկետայի միջոցով պարզել այդ հարցը։

Այս բոլորի հանդէպ չի կարելի դառնօրէն չը ժպտալ և տխուր խոհերով չը թօթվել գլուխը։

Հայ հասարակական մտաւորականութեան մէջ կայ մի զարմանալի խաւ, որ ամէնատեղ հանդէս է գալիս ազգային պարապ սնապարծութեան խափուսիկ փետուրներով զարդարված և ֆրազաբանում է մեծախօս բերանով։ Դրանց համար հայ ինտելիգենցիան, կարծես, սկսվում է հայ սեմինարիստներից և վերջանում հայ վարժապետներով, որոնք սերտել են և՛ հայ պատմութեան, և՛ գրականութեան դասերը։ Ահա դրանք են, որոնք սուբիեկտիվ մոտիւը ընդհանրացնելով՝ անհամաձայնութեան քուէ են տալիս Վերմիշեանի յայտարարութեան։ Միւսները՝ այսպէս անուանված դժգոհները՝ դաւանում են, ըստ երևոյթին, հանգուցեալ «Նոր-դարականութեան» այն տիպիք տրադիցիաները, որոնք կամացուկ շշնջում են հայի ականջին. «Սուս, լռեցէք, օտարների առաջ ազգային թերութիւնների մասին. լաւը գովեցէք, վատը քօղարկեցէք»։

Այսպէս էր հին պահպանողական նացիօնալիզմի փայփայած լօզունգը մեր մէջ։ Եւ այդ նոյն լօզունգը դաւանում ու կրկնում է մեր նորագոյն մեշչանական նացիօնալիզմը։

Այն, ինչ օտարներին թւում է նոր ու զարմանալի, մեր մէջ կազմում է մի հին վիրաւոր հարց, դրված ու ծեծված շատ վաղուց՝ հայ ազատամիտ հրապարակախօսութեան սկզբից։ Եւ Վերմիշեանի յայտարարութիւնը ոչ միայն ճիշդ է, այլև այդ ճշդութիւնը խոստովանված ու ասված է շատ կիսատ, թերի։

Արդարև՝ հնարաւո՞ր է ենթադրել, որ մի ինտելիգենցիա կատարելապէս անծանօթ լինելով իր ազգային գրականութեան, հետաքրքրվի միաժամանակ ազգային իրականութեամբ, նրա մտաւոր-կուլտուրական բովանդակութեամբ, պատմական անցեալով և ժողովրդի ներկայով։ Երբէ՛ք։

Բրիւսօվներն ու Ստարցեվները դեռ չը գիտեն, որ հայ ինտելիգենցիան՝ իր խոշորագոյն մասերով—ազատ պրօֆեսիաների ներկայացուցիչներ, առևտրական և տեխնիկական ծառայող պերսօնալի հսկայական լեգիօնը—ոչ միայն չը գիտեն իրանց մայրենի պօէզիան, այլ և անկարող են իրանց տարրական մտքերը մայրենի գրականական լեզուով արտայայտելու։ Իսկ չը հասկանալ կամ չը տիրապետել մի ժողովրդի լեզուի, ազգային օրգանիզմի այդ գլխաւորագոյն և նախապայման գործօնին, նշանակում է առ հասարակ չապրել այդ ժողովրդի հաւաքական կեանքով, նրա խոհերով ու խռովքներով, հոգսերով ու ձգտումներով։

Օտարները չը գիտեն դեռ, որ հայ ժողովուրդը գուցէ միակ տխուր բացառութիւնն է կազմում, ուր վերոյիշեալ խոշոր նուիրական գործօնը—մայրենի լեզուն—ամենածանր վիրաւորանքի ու արհամարհանքի է ենթարկվում հայկական պլուտօկրատիայի ընտանիքներում և շրջաններում, և ուր խոշոր բուրժուաներից, հայկական «մեծամեծներից», իբրև մօդայական ախտ՝ տարածվում է այդ վիրաւորական սովորոյթը նաև միջին ու մանր առևտրականների և արհեստաւորների ընտանիքներում։

Օտարները անկարող են երևակայել, որ նոյն իսկ հայ հասարակական, գրական և կրթական-դպրոցական գործիչների մէջ կան շատ շատերը, եթէ չասենք մեծամասնութիւնը, որոնց համար հայ լեզուի գործածութիւնը ծառայեցվում է որպէս երբեմնակի զարդ միայն ժողովներում և մամուլի էջերում, իսկ մասնաւոր շրջաններում և ընտանեկան յարկի տակ վտարվում, հալածվում է նրա գործածութիւնը։

Այո, օտարները չեն կարող անգամ երազել մանաւանդ այն, որ կան նոյն իսկ այնպիսի հայ հրապարակախօսներ՝ ամենասենտիմենտալ տիպի նացիօնալիստների շարքերից, որոնք հրապարակով, մամուլի էջերում գեղուն զգացմունքներ են թափում՝ հայ լեզուի արհամարհված վիճակը ողբալով և պարսաւում աշակերտ ու ուսանող սերնդին, որոնց շարքերում ամենից շատ ճարակումներ է գործում ապազգայնացման հոսանքը, բայց միաժամանակ այդ նոյն հրապարակախօս պարոնների ընտանիքներում ոչ աշակերտը և ոչ ուսանողը, ոչ տղան և ոչ աղջիկը չեն հասկանում և չեն խօսում հայերէն։

Ահա որտեղ է փաստի ամբողջ ճշդութիւնը, որտեղ են թաղնված հայ նացիօնալիստ կուլտուրտրեգերների հասարակական կեղծիքների արմատները։ Եւ մենք ոչինչ դէմ չէինք ունենայ, եթէ հետաքրքրվող օտարները, ներկայ դէպքում Բրիւսօվներն ու Ստարցեվները, իրազեկ լինէին այդ ամբողջ ճշդութեան։

Ո՛հ, հայ քաղքենի նացիօնալիստները հէնց դրանից են վախենում. չը լինի մեր կեանքի այլանդակութիւնը բացվի օտարների առաջ. և նրանք տխուր դօկումենտներ կազմեն հայկական կօլլեկտիվի իրականութեան էջերից…

Նացիօնալիստի դատելակերպը այսպէս է. աւելի լաւ է օտարները դրական կարծիք կազմեն մեր մասին՝ սխալ, շինծու տուեալների հիման վրա, քան բացասական ատեստացիա հանեն մեր հասարակական գիտակցութեան վերաբերեալ՝ հարազատ տուեալներից։

Իսկ ճշմարիտ, անկեղծ ժողովրդասէրի դատելակերպը այսպէս է. թող կուտակված ժահրը թափվի, թող պարուրված կեղծիքը մերկանայ, թող սպառնացող վէրքի բացիլները արմատախիլ լինեն, թող հասարակական ինքնախաբէութեան միրաժը ցրվէ, որպէսզի հեշտ ու հիմնաւոր լինի նոր կեանքի վերածնութիւնը՝ նոր, թարմ ու գիտակից ույժերի միջոցով։

B. Lucifer

---

[*] Տես «Մշակ» № 14.

ԿԱՏԱՐԵՆՔ ՄԵՐ ՊԱՐՏՔԸ

—

… Գրականագէտ Սեդրակ Թառայեանը ծանր հիւանդ է և նիւթական միջոցներից զուրկ…

Չափազանց ծանր է մեզ համար կարդալ այդ տողերը և անտարբեր մնալ։

Ծանր հիւանդ է մի մարդ, որ իր ամբողջ կեանքում քարոզել է սէր դէպի եղբայրը, սէր դէպի ընտանիքը և մերձաւորն ու հեռաւորը։

Եւ ահա այսօր կարօտ է այդ մարդը սիրոյ, գգուանքի և օգնութեան։ Իւրաքանչիւր մարդ, որ իր մէջ զգացմունք ունի, ամեն մի անհատ, որ մարդկային արժանապատուութիւնը գիտակցօրէն պատուել գիտէ, պէտք է հրապարակ բերէ թէկուզ իր նուազագոյն լուման՝ փրկելու մահվան ճիրաններից մի մարդու, որը, յամենայն դէպս՝ փրկել է շատ մոլորվածների՝ կորստեան ճանապարհից։

Հայերս ցոյց տանք, որ միայն մարդու մահից յետոյ չէ, որ ճառել ու գովաբանել գիտենք, այլ և գիտենք նրա կենդանութեան օրով արժանաւոր օգնութիւն ցոյց տալ և ձեռք մեկնել նրան թշուառութեան վայրկեանին։

Թող բոլոր սկզբունքային հարցերը լռեն այնտեղ, որտեղ թագաւորում է մարդկային խիղճը, թող բոլոր դաւանանքները մէկզի մնան, երբ կեանքի խնդիրն է հրապարակի վրա։

Մի մոռանանք, որ ձեր նուիրաբերած կոպէկներով դեռևս կարելի կը լինի փրկել մի կեանք, որը իր քարոզներով շատերին է փրկել և որը յանուն իր գաղափարի և դաւանած սկզբունքի հեռու է մնացել աշխարհիկ կեանքի հաճոյքներից և վայելքներից։

Չը մոռանանք մարդկային պարտականութիւնը և օգնենք նրան։

Յակ. Տէր-Յարութիւնեան

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

—

Ինչպէս երևում է գեներալ Թամամշեանի զեկուցումից, Բաթումի շրջանում փախստականների կարիքների համար համաճարակային գումարներով և զեմստվային միջոցներով պահվում են հետևեալ հիւանդանոցները և ֆելդշերական կայանները. հիւանդանոց Արդուինում, 25 մահճակալով, Արդանուչում նոյնքան. այստեղ կայ նաև 25 մահճակալի կարգ ու սարք, որ հնարաւորութիւն է տալիս ամեն ժամանակ ընդարձակել հիւանդանոցը. հիւանդանոց Քիդիխում 25 մահճակալով, Կօրուլէտում 15. Խուլօյում կայ թռուցիկ կայան, կազմված մի բժշկից և երկու ֆելդշերից, Սատլէլում՝ ֆելդշերական կայան։ Անկախ այս բոլորից, Բաթումում քաղ. միութիւնը կահաւորել և բացել է հիւանդանոց 100 մահճակալով։ Գեն. Թամամշեան այժմ դիմել է քաղ. միութեան տեղական լիազօրին, խնդրելով Սատլէլի գիւղում բացել հիւանդանոց 25 մահճակալով։

—

Փոխարքան թոյլատրել է, որ կառավարական օգնութեան կարիք ունեցող փախստականները Թիֆլիսում մնան մինչև ապրիլի 1-ը։ Այդ պատճառով նահանգապետը առաջարկել է պատերազմից վնասվածներին օգնող քաղ. կենտրոնական կոմիտէտին կազմել քաղաքում գտնվող փախստականների ցուցակը։

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

—

ԲԱՅԱԶԻԴԻ ՈՒ ԴԻԱԴԻՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

(Զեկուցումն)

II

Հայ գաղթականութեան կատարած աշխատանքը վերոյիշեալ շրջաններում

Ինչպէս վերևում ասացինք, հայ գաղթականները քիւրդերի մեկնելուց հազիւ 15—20 օր անց, ոմանք էլ աւելի ուշ, եկան հաստատվեցին այս կողմերում, մինչև նրանց գալը, ուրեմն, քիւրդական գիւղերի շատ տներ բնաւեր էին եղել, կամ կիսաքանդ և և կամ յամենայն դէպս ոչ անմիջական բնակելի. ուստի հայ գաղթականը առաջին օրից պարտաւոր էր ձեռնարկել շինարար գործի, իր համար քիչ թէ շատ մի տանելի բնակարան ստեղծելու համար. և ի պատիւ հայ գաղթականութեան պիտի ասել, որ նա այդ գործում ցոյց տուեց մեծ ժրաջանութիւն. և այսօր նա փողոցում չէ, այլ պարզապէս իր տանը, իրա համար խիստ անհրաժեշտ ու սիրելի թոնրի շուրջը։ Պիտի ընդգծեմ, որ գաղթականը իր բոլոր պէտքերի համար դիմելու մի տեղ ունէր. դա՝ «Եղբ. Օգնութեան» կոմիտէն էր, որի գործիչները բնակվում էին գաղթականների գիւղերում, շրջում տուն առ տուն և հարկ եղած խորհուրդներն ու օգնութիւնը չէին խնայում նրանց։ Բնակարանների տեսակէտից եզիդները աւելի բաղդաւոր էին և աշխատելու այնքան էլ կարիք չունէին, քանի որ քիւրդերի մեկնելուն պէս նրանք նրանց տեղերը բռնեցին, որոնք դեռ անյայտ ձեռքերից քանդված չէին։

Այսպէս՝ հայ շինական-գաղթականը իր բունը քիչ թէ շատ ապահովելուց յետոյ, հէնց օգոստոսի վերջերքից սկսեց իր սիրելի դաշտային աշխատանքները. և ահա հայ շինականի երգը նորից լսվեց կալում։ Անշուշտ հայ գաղթականը ոչ մի գործիք չէր բերել իր հետ, ինքն էր ու իր կենդանիները, բայց տեղումը մի քանի գործիքներ գտնելուց յետոյ, մի շարք գործիքներ էլ փոխարինաբար «Եղբ. Օգնութեան» կոմիտէն վեր առաւ Մուսունի, Կորունի և Արծափի տեղական գիւղացիներից ու տուեց գաղթականութեան, որով հնար եղաւ՝ մի կողմից հասած ու քաղված դաշտում թափած ցորենի խուրձերը հաւաքել տալ և դէզ կազմել և ապա կալսել, կամ քաղել, խուրձ կապել, դէզ դիզել և կալսել. այդպէս և գարին. միւս կողմից էլ դաշտից հաւաքել քաղված խոտը և բերել գիւղ, դէզ անել. երրորդ կողմից կալից դարմանը հաւաքել կամ մարագներում և կամ դուրսը։ Ու այս աշխատանքը տևեց մինչև նոյեմ. 15-ը. վերջին կալն արին ալեզարդ ծերունի ռէս Շէրօ Ֆարուխեանը, Արադայի դաշտեցի, և ռէս Սարգիսը՝ իրանց ընկերներով որոնց նման աշխատաւորները պատիւ կարող են բերել ամեն մի ժողովրդի։

Եւ ահա այս աշխատանքի արդիւնքը։

Շամսուի, Դուտաղի, Կիւլլիճէի, Խաչլուի և Օմար-բէգի—այս 5 գիւղերի հայ գաղթականները իրանց աշխատանքով արտադրել են մօտ 2400 կոտ ցորեն և գարի՝ մօտ 1500 կոտ. բացի այդ՝ հաւաքել ու ապահովել են

ՕՐՎԱՅ ՀՈԳՍԵՐԻՑ

—

Մուղսի-Ակոբը գիւղի գրի սևն ու սպիտակը ճանաչող, աչքաբաց մարդկանցից էր։ Օրական 10—20 մարդ իրանց երազների մեկնութիւնն էին նրանից հարցնում, քանի քանի նամակներ էին բերում կարդալու և գրելու, ասելն աւելորդ է։ Հիւրասիրութեան կողմից էլ ետ չէր մնում շատ-շատերից։

Տղերքը տան եղած ժամանակը նրա չայն ու փունշը շատերի բերանին համ էին բերում։ Է՛հ, գնար, էլ ետ չը գար էս վերջին տարին, որ գնաց չեքացաւ։ Տան միակ աշխատողը Ակոբն էր մնացել. ինչ արած, ում գանգատի գնար. մենակ ինքը չէր էդ օրին, շատ-շատերը նեղութեան մէջ էին։ Նման տարում տուն պահելը, երեխայ հագցնելը, կերակրելը այնքան էլ հեշտ չէր. քարով փայտ կտրել էր։

Ձմրան երկար գիշերները գիւղում էլ չէին պատմվում Շահ-Իսմայիլի, Քեօռ-օղլու, Աղասու և ուրիշ քաջերի պատմութիւնները. մարդիկ կարծես թէ բոլորը մոռացել, մտքից գցել էին և տածում ու պատմում էին տարի ու կէս շարունակվող կռւի մասին։

Ե՞րբ կը վերջանայ, ինչ կը բերի համար էդ կռիւը էսքան զոհաներից յետոյ և այլն և այլն։

կոբը գիւղի հրապարակում նրան լրագիր կը կարդար և գիւղացիներ կռւի դրութիւնը և պայմանները։ Երբեմն վիճա էին բռնվում գիւղացիք Անգ րմանիայի ուժերի մասին, Ռու րքը ամենից գերազանցում և որ վերջը մենք ենք պարզերես դուրս գալու և այլն։

— Է՞յ, Մուղսի, մայրեր են մեռնում է՜, — երկարացրեց Աչըղ-Խաչին, — էս կռիւ ա, ջրհեղեղ ա, ինչ ա. դրա համար են ասել, երանի էն մարդին, որ ժառանգ չունի. մենակին որ տան կորոճն էլ գետ անցնի, էլի երկմտութիւն չունի։

— Խաչի, էս կռիւը անպատճառ պէտք է լինէր. պապս ասում էր՝ աշխարհս մի դասըխանա է, երբ մարդիկ շատանում են, Աստուած մի կռիւ է ստեղծում, մարդիկ իրար կոտորում են, փչացնում, — ասաց Մուքելը։

— Էս կռիւը ինձ համար շատ պարզ ա, էնպէս պարզ, ինչպէս, ա՛յ, էս հինգ մատս. — ցոյց է տալիս Մուղսի-Ակոբը։ — Կազէթ միշտ կարդում եմ, քաղաք որ գնում եմ, ծանօթ-անծանօթից խաբար եմ հարցնում, նամակները մեծ մասամբ ես եմ կարդում. շատ ժամանակ քիչ է մնում ասեմ, որ ես էլ եմ կռւի մէջ։ Կազէթները ասում են՝ էս կռիւը գիտութեան կռիւ է, խելքի կռիւ է, էն տարիները գնացին, որ մի մարդ մի թրով 10 մարդ էր սպանում. հիմա կռւում են ջրում, հողի տակին, հողի երեսին, երկընքում ղուշի նման թռչելիս. էլ ո՞ր մէկն ասեմ։

— Մուղսի, էդ էս ասում. էն օրը ես էլ քաղաքում գնացի ղանթարի տակը. ասում են՝ մեր էն դատերը… ըմ… անունը ինչ է… մտքից ընկել ա… հա… մեր տէրութեան ընկերները, փռանգը, փռանգը. մին էնպէս արև ա դուրս բերել, որ չափաղը տալիս է թշնամու զօրքին, բոլորը էրվում, չորանում են։

— Էս մինը որ ղորթ լինի, բաւական ա, — ասաց Ջաւադը։

— Ջաւադ, շատ-շատ բաներ են ասում, ո՞ր մինին հաւատաս, դժուար ա։

— Հա, ինչ ի ասում. էս կռիւը ինչ օրի որ սկսել ա, մինչև հիմա, առանց բեզարելու առաջ են տանում և կռիւ են անելու մինչև որ երկուսից մինը խնդրի, աղաչի, թէ այ մեռայ, բաւական է։ Մերոնց գործը նրանով է լաւ, որ շատ են. հաշիւը որ կարդաք, արխային կը դառնաք, որ կռիւը մեր կողմին ա մնալու, մենք ենք յաղթելու։

— Տայ Աստուած, տայ Աստուած, — այս ու այն կողմից վրա են բերում գիւղացիք։

Եւ այսպէս շարունակ գիւղի հրապարակը, ուր երեքից աւելի մարդ էր հաւաքվում, այս ու այն կողմից մարդիկ էին խմբվում և կռւից խօսում։ Զրուցող մարդկանց շուրջը հաւաքվում էին կանայք, հարսներ և երեխաներ անգամ, ոմանք գուլպայ գործելով, ոմանք պարապ. և այդպէս ժամեր ժամերի ետևից էին անցնում և նրանք լսում էին, լուռ ու մունջ կանգնում։

Կանայք, որոնք կռւի դաշտում կռւող որդի կամ եղբայր ունէին, այս ամենը լսելով՝ ժամացոյցի ճօճանակի պէս աջ ու ձախ օրօրվում էին անընդհատ. իսկ ջահէլ հարսները ախ ու վախ քաշում, երեսները դէպի երկինք ուղղում և ամուսինների համար բարի վերադարձ խնդրում։

Ահա այս է գիւղի, հայ ամայի գիւղի կեանքը։ Չը կայ ուրախութիւն, քէֆ. դափ ու զուռնայի ձայնը շատ քիչ է լսվում գիւղերում, լսված ժամանակն էլ մի բանի նման չի։

Գիւղ, կը գայ և ուրախութեան ժամը, տոկա՛, տա՛ր այս հսկումի, տքնութեան ծանր հեծութիւնը։

Սազանդարեան

ք մի պատկառելի հաղաբաւոր գումար. բացի դրանցից, հայ գաղթականը ապահովված է ձմեռը նաև վառելիքի կողմից. այսինքն ունի այնքան ցան կամ աթար, որով հնարաւորութիւն կունենայ թէ իր հացն ու կերակուրը եփելու և թէ իր սառն մերկամարմին անդամները տաքացնելու:

Կրկնում ենք, որ այս աշխատանքը կատարել է այն 10%-ը գաղթականութեանը, որը վերև մենք ցոյց տուեցինք: Չը պէտք է մոռանալ յայտարարելու, որ այդ նոյն մարդիկը ցերեկվայ այդ ծանր աշխատանքից յետոյ գիշերներն էլ հարկադրված էին իբր պահակներ շրջել գիւղերում և ի հարկին դիմադրել սարերից յանկարծակի վրա տուող քիւրդ հորդաներին ու պաշտպանել իրանց կեանքի գնով գիւղական հասարակութիւնը:

Ու այս բոլոր անտեսութիւնը հայ գաղթականն արել է ղեկավարութեամբ «Եղբ. Օգնութեան» կոմիտէի և անմիջական նրա հսկողութեամբ, ինչպէս և ինքնապաշտպանութեան գործը, որը կազմակերպել է մինչև այժմ և տարել նոյն կոմիտէն.

Գաղթականութիւնը իր արտադրած ցորենով հէնց ապրել է մինչև հոկտ. ամսի կէսերը, ուրեմն մօտ 2 ամիս. այդ ժամանակաշրջանում «Եղբ. Օգնութիւնը» մի քանի հարիւր փութ ալիւր է միայն կարողացել հասցնել այն գիւղերին, ուր հնարաւոր չէ եղել տեղական աղացք ունենալ:

Սակայն 15-ից վերջնական
կերպվեց Ալաշկերտի «Ե
տէն, որի պատասխ
նախագահն է ի
մեծել կա
«Հայ
Ա

մ-
ւթիւն

օրէն կազմա-
ղբ. Օգն.» կոմի-
անատու և պատուաւոր
օրէն սրբազանը: Այդ կո-
մի մէջ մտան 1) «Եղբ. Օգն.», 2)
Իրաւատու.» և 3) «Նպաստ.» ընկերութիւնների ներկայացուցիչները, որոնք սկզբից մինչև այժմ իրանց ստանձնած գործը առաջ տարան առանց մի րոպէ խանգարելու այն գեղեցիկ համերաշխութիւնը, որը անչափ կարևոր է մանաւանդ այն ժողովրդական օգնութեան մեծ գործում:

Կոմիտէն առաջին իսկ օրից ուշադրութեան առաւ վերոյիշեալ շրջաններում արդէն տեղաւորված գաղթականների վիճակը, զգաց և ըմբռնեց այն մեծ կարիքը, հացի պակասութիւնը, որ շատ շուտով երևան է գալու. և անա ձեռնարկեց ցորեն ամբարելու գործին: Խորէն սրբազանի Կարա-Քիլիսէից մեկնելուց 3—4 օր յետոյ, կոմիտէն պաշտօնապէս IV կորպուսի հրամանատար Օ.-կի կողմից վաւերացվելուց յետոյ, նրա անդամները մեկնեցին գործի վայրերը. ինձ վիճակվեց մեկնել Բայազիդի ու Դիադինի շրջանները, ուր, ինչպէս ասացի, տեղաւորվել էն գաղթականները. ընկերներ Ի. Ծոլեան և Բ. Աբոյեան մեկնեցին Թօփրաք-Կալէի (Ալաշկերտ) կողմերը ցորեն գնելու, իսկ ընկեր Ն. Օթարեան, Ս. Տէր-Գէորգեան և Հայկն Մանուկեան մնացին Կարա-Քիլիսէում կազմակերպելու ցորենի փոխադրութեան գործը դէպի Մուսուն ու Արծափ:

Խորէն սրբազանը մեր կոմիտէի տրամադրութեան տակ դրել էր սկզբում 9000 ր., ընկերները այդ գումարով հոկտ. ամսում գնեցին մօտաւորապէս 5000 կոտ ցորեն և անչափ նեղութիւններ կրելով փոխադրեցին Մուսուն և մասամբ Արծափ: Ցորենի կոտը գնվում էր 1 րուբլով, իսկ կոտին էլ փոխադրութեան համար վճարվում էր մօտ 1 րուբլի: Ալաշկերտի հայ գիւղացիութիւնը սիրով էր ծախում իր ցորենը մեր կոմիտէտին, քանի որ ըմբռնում էր, թէ ում համար էր գնվում. և եթէ հոկտեմբերի վերջերին կամ նոյեմբերի սկիզբներին կոմիտէի տրամադրութեան տակ դրըված լինէր հարկ եղած գումարը ցորեն գնելու, անշուշտ կոմիտէն պէտք եղածից աւելի ցորեն կը գնէր, որով թէ գաղթականներին կապրեցնէր և թէ գարնան սերմացու կունենար. բայց, դժբաղդաբար, այդ ուղղութեամբ մեր բոլոր ջանքերը զուր անցան և... Ալաշկերտի ցորենը գնեցին զանազան բաղդախնդիր պօդրադչիկներ:

Հոկտեմբերի վերջերին ես անձամբ եկայ Երևան և Էջմիածին, այն ժամանակ, երբ Էջմիածնում պաշտօնների նոր փոփոխութիւն էր եղած, ու մանրամասն զեկուցմամբ խնդրեցի շտապել, միայն շտապել: Եւ սակայն նիւթական օգնութիւնը՝ ընկ. Ք. Օթարեանի 20 օրվայ աշխատանքից յետոյ՝ հազիւ դեկտեմբերին հասաւ, երբ արդէն ուշ էր, Ալաշկերտում ցորեն չէր մնացել և եթէ քիչ ու շատ էլ մնացել էր, գինը կրկնակի էր դառել. բացի այդ՝ ճանապարհներն էլ ձիւնով ծածկվել էին:

Այսպէս թէ այնպէս՝ մեր ամբարած ցորենը բաւականացաւ մինչև դեկտեմբերի 15-ը:

Ալաշկերտի կոմիտէի անդամներից ընկերներ Ն. Օթարեանն և Մ. Տէր-Գէորգեանը դեկտեմբերի սկզբին եկան Մուսուն, ուր մենք ամբողջ մի շաբաթ շարունակական ժողովներ ունեցանք, մանրամասն քննեցինք գնված ցորենը, տեղափոխված, ստացված և որքան բաժանված լինելը, ստուգեցինք կոմիտէի բոլոր ելքն ու մուտքը մինչև դեկտեմբերի 1-ը և մանրամասն գրի առնելով հաշիւներն ու բոլոր դօկումենտները ընկեր Մ. Տէր-Գէորգեանի հետ ուղարկեցինք Երևան, Խորէն սրբազանին: Ճիշդ այդ անդամին էր, որ

ը իշխանի «Եղբ. Օգն.» գլխաւոր կոմիտէտից իր հետ բերել էր 20 հազար ր., յատկապէս գարնան սերմացու գնելու համար:

Մուսունի շրջանում հաւաքված գարին դեռ ձեռում էր անձեռնմխելի. մենք, յոյս ունենալով որ ցորեն կարելի կը լինի գնել կամ ալիւր ստանալ, որոշեցինք գարին գաղթականների գիւղերից փոխադրել Մուսուն և պահել գարնան սերմացուի համար. այդպէս էլ արինք: Բայց դժբաղդաբար դեկտեմբերի սկզբին վերջին ստացած իմ 1060 կոտ ցորենը 15 օրվայ համար բաժանելուց յետոյ, հնար չեղաւ նոր ցորեն ստանալ և ոչ էլ Իգդիրից 1 պարկ ալիւր. սովը իր անողորմ ժանիքները ցոյց տալ սկսեց. հաւաք դեկտ.-ի 20-ը և ես մի հատիկ ցորեն չունէի. հեռագրեցի Կարա-Քիլիսէ, պատասխան ստացայ՝ ցորեն չը կայ. քանիցս հեռագրեցի և ապա յատուկ մարդ ուղարկեցի Երևան՝ Խորէն սրբազանին, խնդրելով վագօն ալիւր հասցնել. վերջապէս հեռագիր ստացայ Երևանից, թէ 2000 պուդ ուղարկված, բայց Իգդիրից ն
միջոց չը կայ, կենդա
Բարեբաղդաբար եղա
անա ես ու իմ
ըը, պարգևը
կան գր
կա-

2
ագիր
է ալիւր է
ոխադրութեան
ւմներ ուղարկեմ:
ակները լաւ էին. և
ընկերները ընկանք գիւղե-
րը, բացատրեցինք կրիտիքա-
ութիւնը և խնդրեցինք, որ գաղթա-
ները իրանց բեռնակիրները տանեն Իգդիր ու ալիւր բերեն. ասում էինք՝ այժմ կռիւր ոչ թէ քիւրդերի դէմ է, այլ սովի. և ըմբռնելով մեծ վտանգը, այդ «ծոյլ» յորջորջված գաղթականութիւնը անա շարան-շարան դուրս եկաւ իր բեռնակիրների հետ գիւղերից և քայլեց ուղիղ «աւետեաց» երկիրը՝ Իգդիր իր հացը բերելու. անհամբեր սպասում էինք փրկարար ալիւրին: Վերջին օրերը մի քանի պուդ գարի ալիւր Մուսունի տեղացիներից փոխ վեր առայ և բաժանեցի էն նեղեալ որբերին և որբևայրիներին: Եւ երբ դեկտ. 26-ին Բայազիդից վերադառնում էի Մուսուն, անա Արծափում ինձ շրջապատեցին Շամսուից, Կաչանէից ու Մէյրամանէից Իգդիր ալիւր բերելու գնացող խմբերը. Ինչ էք կարծում, ինչ դրութեան մէջ. ալիւր չը կար Իգդիրում, այսինքն դեռ չէր հասել, և իրանք ձեռնունայն ու կատաղած ետ էին դառել, յուզվել, վրդովվել, որոնք այդ մոմենտի բառեր չեն... Ինչ անել. մարդիկ հաց են ուզում, Թիւրքական Թնդանօթից, քիւրդի գնդակից պրծած այդ մարդիկ չեն ուզում սովամահ լինել և ամբողջ թոյնը թափում են իմ և իմ ընկերների վրա. էլ մտածելու ժամանակ չէ,—ասացի ընկերներիս,—պէտք է պահեստի գարին բաժանել և երկարել մարդկային կեանքը գէթ 10 օրով, երևի մինչ այդ կը ստանանք ալիւր. ասացի, յայտարարեցի. ամբոխը խաղաղվեց: Միւս առաւօտ զանազան գիւղերից Մուսուն թափվեցին բազմաթիւ սայլակներ ու եզներ, և մենք, ընկերներով, հանդիսաւորապէս մեր գարնանացանի համար պահած մօտ 1100 կոտ գարին մինչև վերջին հատիկը գրեթէ բաժանեցինք. մնացել էր երեկոյեան դէմ 5 պարկ, երբ անա ստացայ նոր հեռագիր, թէ «ալիւրը հասել է Իգդիր, վերադարձրէք բեռնակիրները». դարձեալ դէպի գիւղերը, դէպի «ծոյլերը». դեկտ. 27-ի, 28-ի, 29-ի և 30-ի առաւօտները դուք Զինդլի և Ղուչախի ճանապարհների վրա կը հանդիպէիք գաղթականների կարաւաններին, որոնք շտապում էին դէպի Իգդիր, Նոր-Տարվայ և Ծննդի տօների համար իրանց ու իրանց որբուկների համար մի պատառ հաց բերելու: Ու բերեցին: Նոր-Տարվայ օրը հայ գաղթականութեան թոնիրներում հաց եփվեց. մինչև յունվարի 4-ը ալիւր էինք բերել տալիս ու բաժանում. գաղթականութիւնը հացից ապահովված է մինչև յունվ. 20—25-ը. այնուհետև նորից նոյն դրութիւնը: «Եղբ. Օգնութեան» Ալաշկերտի կոմիտէտի ղեկավարութեամբ ուրեմն հայ գաղթականը տնտեսել է և ապա ստացել 2400 կոտ ցորեն, 1500 գարի, կոմիտէն հասցրել է մօտ 5000 կոտ ցորեն. սեպտեմբեր ամսում 500 պ. ալիւր, յունվար ամսում 1660 պուդ ալիւր. աւելացրէք դրա վրա խոտը, դարմանը և վառելիքը՝ նոյնպէս գաղթականութեան տնտեսած, իսկ կոմիտէի կողմից տրված են նաև 7 պարկ շաքար, 20 ֆունտից աւելի թէյ, 10 պարկ աղ, 4 պարկ բրինձ (հիւանդներին) և ներքին-արտաքին շորեր՝ որքան ինքն է մաս-մաս ձեռք բերել: Կոմիտէն նիւթապէս օգնել է նաև այն փախստականներին, որոնք աշնանը Սասունից, Մուշից փախել եկել էին՝ տալով նրանց ճանապարհածախս, ուտեստ և ի դէպ հագնելիք:

Կոմիտէն բացի վերոյիշեալ գաղթականներից, պարբերաբար օգնութեան է հասել հացով և այլ բաներով նաև Մուսունի 80-ի և Արծափի 40-ի չափ տեղացի չքաւորներին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ «Մշակի» ներկայ համարը բաղկացած է մէկ և կէս թերթից:

◆ Երէկ քաղաքում կատարվեց տուփերով հանդանակութիւն յօգուտ գերութեան մէջ գտնվող ռուսական զինուորների: Հանդանակութիւնը առաջ էր տարվում մեծ աջողութեամբ, որովհետև ամեն ոք միտն էր բերում գերութեան մէջ եղած իր ազգականին, բարեկամին և մերձաւորին և չէր խնայում իր լուման նրանց օգտին:

◆ Առաջին Պետական Դումայի փոխ-նախագահ Գրեդեսկուլը յունվարի 21-ին այցելութիւն տուեց «Մշակի» խմբագրին՝ խմբագրատանը:

◆ Ներկայումս Թիֆլիսում են գտնվում քաղաքագլուխներ Գանձակի՝ Խասմամեդով և Բաթումի՝ Անդրոնիկով, որոնք այստեղ են եկել փախստականներին վերաբերող մի քանի խնդիրներ պարզելու համար:

◆ Մեզ հայտրդում են, որ Սո
որբանոցում թժաւոր տիֆը սկ
կել և որբերից մի քան
Հայկական կ. Կոմիտ
ենք հրաւիրում ա

◆ Մանր
Սեղբակ Բ
թիւն
Ն

ահինի
ալ է ճարա-
րը հիւանդ են:
էտի ուշադրութիւնն
յդ տխուր երևոյթի վրա:
հիւանդացած գրականագէտ
առայեանին անմիջական օգնութիւն հասցնելու համար կազմված է «Ընկերական օգնութիւն» անունով մի կոմիտէ, գանձապահութեամբ Յակոբ Տէր-Յարութիւնեանի, որը երեք ծանօթների շրջանում հանգանակելով մօտ 115 րուբլի՝ օգնութեան է հասել հիւանդին: Հանգանակութիւնը շարունակվում է:

◆ Ամսիս 22-ին Թիֆլիսում վախճանվեց 80 տարեկան հասակում այրի Մարիամ Պօղօվեանը, որ կենդանութեան ժամանակ նուիրել է 11,000 ր. Ցխինվալի հայոց դպրոցին և 2000 ր. Ներսիսեան դպրոցին, իբրև անձեռնմխելի գումար: Այժմ ժառանգները պսակի փոխարէն նուիրել են 1) Ցխինվալի դպրոցին 100 ր., 2) Հ. Բ. Ընկ. ձրի ճաշարանին 50 ր., 3) Հրատապ սփոփանքին 50 ր., 4) Նպաստամատոյցին 50 ր., 5) Միրանուարի որբանոցին 50 ր. և 6) Բեթղեհէմի ծխ. դպրոցի չքաւոր աշակերտներին 50 ր.: Գումարը 350 ր.:

◆ Յունվարի 25-ին, երկուշաբթի օրը, Վրաստանի էկզարխ Պլատօն արքեպիսկոպոսը մեկնելու է Մցխէթ՝ 12 առաքելոց տաճարը դիտելու:

◆ Առաջիկայ ապրիլի 21-ին, 22-ին և 23-ին ամենուրեք պօստային բոլոր հաստատութիւններում, գիւղական պօստատներում, ուր կատարվում են պօստային գործառնութիւններ, և փողոցներում կազմակերպվելու է տուփերով հանգանակութիւն յօգուտ հիւանդ և վիրաւոր զօրականների: Յիշված օրերում ուրիշ որևէ հանգանակութիւն չի թոյլատրվի Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ:

◆ Թիֆլիսի զինուորակոչական վարչութիւնը ձեռնարկել է ստուգել 1897 թւին ծնված տղաների ցուցակը, որոնք զինուորակոչութեան են ենթարկվելու 1918 թւին: Այդ թւին ծնվածներից, որոնք ընտանեկան հանգամանքներով օգտվում են 1-ին կարգի արտօնութեամբ, պէտք է, մինչև զինուորակոչութեան յայտարարութիւնը, զինուորական վարչութեան ապացոյցներ ներկայացնեն այդ մասին, որպէսզի հնարաւորութիւն ունենան զօրքի մէջ ընդունվել 2-րդ կարգի ռատնիկների իրաւունքներով:

◆ Իրաւասուներ ընտրողների ցուցակների ստուգումը շուտով կը վերջանայ և 10—15 օրից յետոյ կը հրատարակվի: Իրաւասուների ընտրութիւնները տեղի կունենան մօտաւորապէս փետրվարի սկզբներին:

◆ Քաղաքների Միութեան Կովկասեան Գլխաւոր Կոմիտէտը որոշեց ախտահանիչ կամերա բաց անել Գանձակում, Երևանում, Էջմիածնում և Ջուլֆայում. որոշել է նաև մի այնպիսի կամերա բաց անել նաև Բաթումում:

◆ Գեն. Թամամշեան Վրաց Բարեգործ. Ընկ. յանձնել է 30,000 ր. փախստականների համար զգեստներ պատրաստելու համար:

◆ Քաղ. Միութեան կովկասեան կոմիտէտի անդամ Պ. Դոլուխանեան դիմել է քաղ. վարչութեան, խնդրելով ռազմաբեմի պէտքերի համար բաց թողնել 15 վագօն ալիւր:

◆ Քաղ. Միութեան կովկասեան կոմիտէտը Կենտր. Միութեան է ներկայացրել իր գործունէութեան նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների տեղեկագիրը, որից երևում է, որ Կոմիտէտի գործունէութիւնն ընդարձակվել է այդ ամիսների ընթացքում:

◆ Ստացանք Համառուսական Քաղաքների Միութեան հրատարակած «Извѣстія Кавказскаго Комитета» № 5, որ հրատարակված է իբրև ձեռագիր:

◆ Յունվարի 26-ին, Արտիստական Ընկերութեան դահլիճում կայանալու է գրական երեկոյթ վրաց բանաստեղծ Ակակի Ծերեթելի յիշատակին:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ «Р. Сл.»-ի մէջ տպված է Պետական Դումայի անդամներից մի քանիսի կարծիքը Շտիւրմէրին մինիստրների խորհրդի նախագահ նշանակելու առիթով:

Գօդնէվը.—«Ես չեմ կասկածում, որ կը լսեմ Շտիւրմէրից նոր խոստումներ և վարօրօք գիտեմ, թէ ինչ է ասելու նա թղթակիցներին: Դրանք լաւ խօսքեր կը լինեն, բայց կեանքը ինձ սովորեցրել է յոռետես լինել»:

Շինգարեօվ.—«Փոխվեցին մարդիկ, մնաց սիստեմը: Ամեն ինչ հին է: Սարսափելի տաղտկալի է»:

Բժէվսկիյ.—«Շտիւրմէրը ձգտելու է նոր միջոցներով գործադրել հին քաղաքականութիւնը»:

Շուլգին.—«Եթէ Շտիւրմէրը ըմբռնէ երկրի այժմեան դրութիւնը, նա իր ուժերը կուղղէ կռւելու Գերմանիայի դէմ, և ոչ թէ ռուս հասարակութեան: Իսկ թէ կառավարութեան և հասարակութեան միջ
խատանքը հնարաւոր լինի»:

Սավէնկօ.—«Կուրսը մնաց
որպիսին ընդգծել է
պաշտօնանկ եղաւ
ինչպէս իր ժաման
տօնէրից Մ
Զափագան
գիպում

յալ աչ-
է նախկինը,
լօկը: Գօրեմըկինը
րենոյն պատճառով,
ակին արձակվեցին պաշ-
կլակօվը և Շչէգլօվիտօվը:
անհնարին էր Դումայի հան-
ը նախկին պրեմիէրի հետ»:

Ռուս ժողովրդի միութեան գլխաւոր խորհուրդը որոշել է ողջունել Շտիւրմէրին:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՇԱՀԵԿԱՆ ԳԻՐՔԸ

Նոր լոյս տեսած այդ գիրքը կոչվում է «Сотрудничество семьи и школы» (Համագործակցութիւն տան ու դպրոցի): Հեղինակն է ֆրանսիական նորագոյն ականաւոր մանկավարժ Վ. Բուլիօ, թարգմանիչն է օր. Ա. Ն. Տէր-Կարապետեան, խմբագրողն է Թիֆլիսի առաջին գիմնազիայի ծնողական ժողովի նախագահ բժշկ. Ա. Ց. Շխեան, հրատարակութիւն նոյն գիմնազիայի ծնողական ժողովի, 1915 թ., Թիֆլիս, տպարան Էսպէրանտօ, գինն է 75 կոպ.:

Մեր ապրած օրերում, մեր կեանքի մէջ, ուր նիւթապաշտութիւնը ծառացել, ճիւղաւորվել է հրէշաւոր չափերով, մարդկանց հոգու աչքերը կուրացնելու չափ, հազուագիւտ են այն ուսեալ մասնագէտները, որոնք իրանց հացի խնդրից դուրս ազգային կամ մարդասիրական մի բարձր իդէալ ունեն, որին ծառայում են իրանց բոլոր սրտով, որի իրականացմանը նուիրում են իրանց հոգեկան ու մտաւոր ուժերը:

Այդ սակաւներից է բժ. Շխեանը:

Բժշկի հմտութիւն, կեանքի փորձառութիւն, բարի սիրտ և գրելու տաղանդ ունենալով նա, ինչպէս յայտնի է ընթերցողներին, իր համար իդէալ է ընտրել վաղուց ի վեր գրչով ու գրքով կռւել այն հրէշի դէմ, որ կոչվում է հակաառողջապահական կեանք, վարդապետել կեանքի առողջապահական պայմանները:

Վերջին տարիներում «Մշակի» էջերում, ինչպէս և առանձին հայերէն ու ռուսերէն գրքոյկներում մենք կարդացել ենք բժ. Շխեանի հմտալից գրուածները, ուր հերքվում է այն մոլորութիւնը, թէ օրէ-ցօր տարածվող հիւանդութիւնները, մանաւանդ տարափոխիկները, թոքախտը կարող են պակասել բժշկական դեղերով, և համոզվել ենք, թէ հիւանդութիւններն իրանց սաղմի մէջ մեռցնողը միայն գիտակցական առողջապահիկ կեանքն է:

Առողջապահութիւն ուսուցանել կարելի է կենդանի խօսքով, գրքով և դպրոցներով կամ դաստիարակութեամբ:

Ուղիղ դաստիարակութիւնը լաւագոյն և հզօր միջոցներից մէկն է հոգու ու մարմնի առողջութեան:

Եւ անա մանկավարժութեանը լրջութեամբ հետևած բժիշկը տպագրութեամբ ծնողների և ուսուցիչների առաջն է դնում Բուլիօյի իմաստալից գիրքը իր երկու առաջաբաններով և վերջաբանով:

Գրքի սկզբում բերված է հեղինակի նամակը բժ. Շխեանին ուղղած, ապա նշանաւոր մանկավարժ քննադատ Գաբրիէլ Կամպէյրէի քննադատականը Բուլիօյի գրքի վրա:

Գիրքն ունի և վերջից յաւելուած, ուր իրանց առարկաների դասաւանդման և ծնողների գործակցութեան վրա մի-մի յօդուած են գրել Թիֆլիսի գիմնազիաների մասնագէտ մանկավարժներն ու տղայոց III գիմնազիայի վերատեսուչ մաթեմատիկոս պ. Կրամարենկօն:

Գիրքը ձօնված է Կովկասի նախկին փոխարքայ կոմս Վօրօնցով-Դաշկովին հետևեալ պատճառով:

1912 թ. կարդացինք կոմսի մի խելացի նամակը, որ ուղղված է Կովկասի ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուին, ուր դաստիարակութեան իմաստը և ժամանակի դպրոցական թերութիւններն առաջ բերելով հեղինակը շատ կարևոր բարեփոխութիւն է համարում ծնողական ժողովներ կազմել իւրաքանչիւր դպրոցին կից, ուր ուսուցանող մանկավարժներն ու աշակերտների ծնողները փոխադարձ աջակցութեամբ ուսուցանեն և դաստիարակեն աշակերտող սերնդին, միմեանց թերին լրացնելով և դպրոցը իր բարձրութեան վրա դնելով:

Գործադրութեան մէջ մտան կոմսի գաղափարները, և ծնողական ժողովները սկսեցին գործակցել մանկավարժական խորհուրդներին:

Այդ գաղափարների ջերմ կուսակից հանդիսացաւ մասնաւորապէս I գիմնազիայի ծնողական ժողովը իր նախագահի՝ բժշկ. Շխեանի առաջնորդութեամբ:

Իր գործունէութեան համար և ուղիղ դաստիարակութեան համար իբրև մի արժէքաւոր օժանդակութիւն, պ. Շխեանը ի լոյս է ընծայում ծնողների համար այս գործնական մանկավարժութիւնը, որ նուիրվում է կոմս Վօրօնցով-Դաշկովին:

Ի՞նչ է այդ գրքի բովանդակութիւնը իր պէս-պէս մասերով:

Մանուկները, այդ կենդանի էակները, դաստիարակութեան առարկան են. դրանք ծնողների գալիք ուրախութիւնն են, յոյսը և մի ազգի կամ հասարակութեան նորագոյն անդամները կամ գալիք հասարակութիւնը: Նրանց ուղիղ դաստիարակութիւնից է կախված ծնողների և հասարակութեան երջանկութիւնը իսկ սխալ դաստիարակութիւնից՝ երկուսի թշուառութիւնը:

Ուղիղ դաստիարակութեան համար առաջին և էական պայմանն է մանուկներին՝ այդ կենդանի, անհատական կողմերով բազմազան, մարմնից ու հոգուց կազմված էակներին լաւ ճանաչել, ուսումնասիրել և ապա նրանց ֆիզիքականին ու մտաւորին յարմար կրթող, զարգացնող պաշար տալ:

Սակայն հէնց այս էական պարտականութիւնն է, որ մոռացվում է ծնողների կողմից: Ծնողները շատ լաւ գիտեն իրանց տան գոյքը, ճանաչում են նրանց յատկութիւնները, բայց իրանց երեխաներին չեն ճանաչում:

Քաղաքացի հարուստ ծնողների համար երեխաների ուսումը միջոց է նրանցից ազատվելու և զուարճութիւնների նուիրվելու համար: Թատրոն, ճանապարհորդութիւն, զբօսանք, թղթախաղ, բամբասանք, մօդիստկա, տեսակցութիւն և այլն. անա ինչով է զբաղված ժամանակակից ծնողը, որ իր երեխաներին թողնում է ծծմօր, օտար դաստիարակչուհու և ապա դպրոցի խնամքին:

Ինչու համար է փողը, որ ծնողն այդ հաճոյքներից զրկվի. փող տուր դպրոցին, որ ծնողն ազատ լինի դաստիարակութեան պատասխանատուութիւնից և նուիրվի իր ես-ին: Ահա մոլորութեան հիմքը:

Այսպիսի անփութութեան և ծնողների տուած գէշ օրինակների հետևանքով, այն փոքրիկ «հրեշտակիկներից» վերջ ի վերջոյ դուրս են գալիս անպէտք, վնասակար, այլասերված, եսական, կոպիտ անձեր: Իսկ յուսահատ ծնողները շուարած հարցնում են՝ «Ինչու այսպէս եղաւ իրանց «հրեշտակիկը», առանց ըմբռնել կամենալու կամ կարենալու, թէ իրանք փչացրին թէ իրանց և թէ իրանց որդոց երջանկութիւնը:

Ծնողների խակութիւնը երեխաներին դպրոցի ապուշ է թողնում, ուր սիրոյ սէրև և ազատութիւն չը կայ այդ բանական մատաղ տունկերի համար, այլ միայն խիստ կարգապահութիւն և մանկական հոգուն ու անհատականութեանը հակառակ հրամաններ:

Ծնողների անտարբերութիւնը երեխային օտար աղախնու և դպրոցի գիրկը գցելով հեռացնում է օջախից, անժամանակ ճաշակել տալիս կեանքի մեռցնող վայելքները և շուտով առաջ բերում կասկածամտութիւն, և յոռետեսութիւն որ կորուստն են անհատի, ծնողների և հասարակութեան երջանկութեան:

Պակաս վնաս չեն բերում երեխաներին նաև ծնողների սնափառութիւնն ու նախապաշարմունքը: Նրանք՝ հակառակ երեխայի հակումներին՝ իրանք են փաթթում նրա վզին մասնագիտութիւն, մեծ մասամբ այնպիսի, որ նրան մտցնէր բիւրօկրատիայի փայլուն շրերի աշխարհը. այնտեղ այդ հէգ արարածը մի անկիւն ընկած պաշտօնեայ է դառնում, կիսաքաղց, մինչդեռ իր հակման հետևելով նա կարող էր որևէ ձեռքի աշխատանքով երջանիկ լինել, հարստութիւն դիզել, ազատ և երջանիկ ապրել:

Ծնողների համար ամօթ է, որ գրիչ բռնող ձեռքը դաշտի վրա գործիք բռնի. մի անմիտ նախապաշարմունք, որ չի նկատում թէ բոլոր գրիչ բռնողները բահ բռնողներով են ապրում:

Տղան բիւրօկրատիայի մի անկիւնում կծկվելով և միայն մաքուր հագուստ ունենալով՝ անաջողականութեան դէպքում ընդունակ է դառնում ամեն ցածութեան, կեղծիքի, կաշառքի, հաշւով ամուսնութեան և այլն: Այսպէս է առաջ գալիս ընկած բարքերով ինտելիգենցիան, որ տգիտութիւնից աւելի վնասակար է մի ազգի և հասարակութեան համար:

Ծնողների սնափառութեանն են պարտական երեխաներն իրանց վաղաժամ յոգնածութեամբ. երեխային վաղաժամ ծանօթացնում են գիտութիւնների հետ, բնութեան հակառակ, զարգացնում են յիշողութիւնը և՝ վաղաժամ փակելով դատողութեան ճանապարհը՝ յոգնեցնում, բթացնում, հիւանդացնում և յուսահատեցնում են երեխային:

Պակաս վնաս չի տալիս դաստիարակութեան գործին նաև ծնողների մոլար հասկացողութիւնը ուսուցչի պարտականութեան վրայ: Ծնողները առանց ի նկատի ունենալու, որ իրանց որդիք շատ անգամ ծնողների մեղքերի հետևանքով են թոյլ ու անզօր դառնում և հետևաբար անաջողակ ուսման մէջ, դատապարտում են ուսուցիչներին, մեղադրում են նրանց անուշադրութեան մէջ, չը հասկանալով որ ուսուցիչը պարտաւոր է ամբողջ դասարանի հետ զբաղվել, այլ ոչ թէ մէկի կամ միւսի:

Շատ անգամ էլ սխալ, վնասաբեր սիրով ու փաղաքշանքներով ծնողները քնքշացնում են երեխաներին և անընդունակ դարձնում կռւելու դժուարութիւնների դէմ:

Այսպիսի սխալ դաստիարակութիւնն ուղիղ ճանապարհի վրա դնելու համար, գրքի հեղինակը յանուն նոր սերնդի մտաւո
ֆիզիքական, բարոյական առողջ դաստ
րակութեան, յանուն հասարակութեան
ջանկութեան և ազգային իդէալի, դաստ
րակութեան հիմքում ծնողների և դպր
համագործակցութիւնն է դնում և շար
է այն բոլոր միջոցները, որ փոխադարձ

բար և կենդանի յարաբերութեամբ գործ պէտք է դնեն ծնողներն ու ուսուցիչները, որպէսզի մանուկներն ուղիղ դաստիարակվեն և պիտանի մարդիկ դառնան թէ իրանց, թէ ծնողների և թէ հասարակութեան համար։

Ահա մի գիրք, որ բացարձակ շահեկան կարելի է համարել երեխաների դաստիարակութեամբ հետաքրքրվող ծնողների և ուսուցիչների համար։

Աւելի շատ կը յանձնարարէինք այս գիրքը հայ ծնողներին, որովհետև հայ տան մէջ գրեթէ դաստիարակութիւն չը կայ և շատ ծնողներ վերջ ի վերջոյ տանջվում են իրանց որդոց մեծամիտ, ապերախտ, չար, արհամարհոտ զաւակների երեսից, առանց ըմբռնելու թէ այդ դառնութիւնն իրանց անտարբերութեան հետևանքն է, որով վերաբերվել են իրանց որդիների դաստիարակութեան գործին։

Այդ գիրքը յանձնարարում ենք և հայ հասարակութեանը, որ կարդայ ու ըմբռնի, թէ ինչն է պատճառ, որ օր աւուր աճող իր ինտելիգենցիան չէ արդարացնում ոչ դաստիարակութեան և ոչ ազգային իդէալը։

Հայ հարուստ ծնողներին և «հայրենասէր» ինտելիգենտներին այդ գիրքը աւելի մատչելի է, որովհետև հայերէն չէ։

Բենիկ վարդապետ

ԿԵԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Էջմիածնի նորութիւններից

Էջմիածին, 18 յունվարի

Էջմիածնի Եղբ. Օգն. կարգադիր յանձնաժողովը երկու նուագով նպաստ է տուել 1700 ր. Վաղարշապատի դպ.-ին՝ գաղթական երեխաների ուսման և կրթութեան համար։ Իմացանք, որ նոյն ընկերութիւնը նոյն նպատակով տուել է 500 ր. Ախալքալաք քաղաքի դպրոցին։

Բծաւոր տիֆը և ուրիշ տարափոխիկ հիւանդութիւններ մեծ ծաւալ են ստանում մեզանում շնորհիւ տեղացիների ագիտութեան և մասամբ էլ հիւանդանոցներում գործող թերուս ծառայողների, որոնք չը հասկանալով հիւանդութեանց վարակիչ լինելը՝ առանց արտահանութեան դուրս են գալիս փողոց և գնում տուն ու իրանց և ուրիշներին վարակում։

Հասարակ դասակարգի մէջ տարածված է այն կարծիքը, թէ ում տանեն հիւանդանոց, նա կը մեռնի. ուստի շատերը թագցնում են իրանց հիւանդութիւնը և չեն յայտնում վախից։ Բայց այսօր գործի գլուխ է կանգնել մի հմուտ անձն յանձին բժ. Դ. Տէր-Մկրտչեանի, որ, ինչպէս իմացանք, կազմակերպելու է դասախօսութիւններ հասարակութեան համար՝ ցոյց տալու, որ չը պէտք է վախենալ ոչ հիւանդութիւնից և ոչ էլ հիւանդանոցից։

Երէկ, յունվարի 17-ին, Վալէրի Բրիւսովը եկաւ Էջմիածին։ Ճեմարանի տեսուչը և ուսուցչական խումբը փառաւոր ընդունելութիւն ցոյց տուին։ Ի պատիւ Բրիւսովի ճաշ տրվեց վանքի մատենադարանի դահլիճում. միաբաններից ներկայ էին Բագրատ եպ. և Արսէն վարդ.։ Բագրատ եպ. գեղեցիկ ճառով ռուսերէն բարի գալուստ մաղթեց հիւրին. ապա նրա գալստեան առիթով շնորհակալական ճառեր արտասանեցին Գարեգին վարդ. և ճեմարանի ուսուցիչներ Ալթունեան, Մակինցեան և Տէր-Յովսէփեան. խօսեց նաև բանաստեղծ Վահան Տէրեան. իւրաքանչիւր ճառից յետոյ Բրիւսովը պատասխանում էր զգացված կերպով։ Ճաշից յետոյ հիւրերը ներկայացան Վեհին, ապա վերադարձան Երևան, ուր Բրիւսովը պիտի կարդայ իր դասախօսութիւնը։

Թղթակից

Նոր ընտրութիւն

Ախալքալաք, 17 յունվ.

Յունվարի 15-ին հայոց դպրոցում տեղի ունեցաւ Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղի ընդհ. ժողովը։ Օրակարգի խնդիրներն էին՝ 1916 թ. նախահաշւի քննութիւնն ու հաստատումը և վարչութեան երկու նոր անդամների ընտրութիւնը։

Ընդհ. ժողովը անփոփոխ հաստատեց վարչութեան կազմած նախահաշիւը, իսկ վարչութեան նոր անդամներ ընտրվեցին՝ Վ. Կարապետեանը և Յ. Բաղալեան։

Վերջում վարչութեան նախագահ Վ. Շահ-Պարոնեանը կարդաց իր կազմած զեկուցագիրը տեղիս ճիւղի 1915 թ. գործունէութեան մասին գաղթականական գործում։

Օվի

Հոգաբարձական ընտրութիւն

Շուշի, 10 յունվարի

Քաղաքիս ս. Յովհաննէս-Մկրտչի եկեղեցու գաւթում Ի. Թադէոսեանի հաշւով կառուցված է մի դպրոց և ապահովված 30,000-ով, որի տոկոսով պահվում է դպրոցի գոյութիւնը և ուր սովորում են 140-ից աւելի երկու սեռի մանուկներ։

Ամսիս 10-ին կայացաւ այդ դպրոցի համար հոգաբարձուների և եկեղեցու համար երեցփոխի ընտրութիւն։ Ընտրութեան արդիւնքը բաւարար էր. Լևոն Թադէոսեանը (դպրոցի հիմնադիր-բարերարի որդին) ընտրվեց պատուաւոր հոգաբարձու։ Երեցփոխ ընտրվեց Գր. Յովհաննիսեանը։

Ծխական

ՄԱՄՈՒԼ

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

«Աչըգ-Սէօզը» յունվ. 10-ի իր համարի առաջնորդողում, խօսելով Պետ. Դումայի առաջիկայ գումարման առիթով, ասում է.

Անտարակոյս այս պատմական ժամանակներում բացվելիք Պետ. Դումայում կարևորագոյն կանոններ կը մշակվեն՝ կեանքում մուծելու։ Թէ ընդհանուր երկրի և թէ այս երկրում ապրող առանձին-առանձին ազգերի հասարակական և քաղաքական կեանքին վերաբերեալ մեծ հարցեր ի յայտ պիտի գան։

Բացի դրանից՝ ամբողջ Ռուսաստանի և առանձին-առանձին ազգերի անունից հարկ է զեկուցումներ ներկայացնել նրան։ Երկիրը և նրա ազգերը երբ անձնուիրութեան պատրաստ գտնվեցին, ապա այդ անձնուիրութիւնը արդիւնաւէտ դարձնելու միջոցների առիթով պէտք է կարծիքներ յայտնվեն։ Երկրի և ազգերի տուած անձնուիրութեան փոխարէն ինչեր որ ակնկալվում են, դրանք մի անգամ ևս պիտի հրապարակ հանվեն և պիտի խօսել նրանց մասին։ Մեր Թուրք ազգի անկազմակերպ վիճակը, մտաւորական դասակարգի՝ հասարակական մի որոշ գաղափար որդեգրելու առիթով ունեցած թուլութիւնը, իդէալական միաբանութեան չգոյութիւնը, Դումայում մեր ֆրակցիայի՝ իսկապէս բարոյական և նիւթական կարողութիւնից զուրկ մնալը բաղդատմամբ այլոց և այլ նման հարցեր կարիք ունեն հրապարակական շօշափման։

Այս վերջին խնդրի առիթով, Թերթը կոչ է անում իսլամ ժողովրդին, որ սա ուշադրութիւն դարձնէ յիշեալ ֆրակցիայի նախագահի՝ թերթի նոյն համարում հրատարակած նամակի վրա, որ ասում է.

«Այս նշանաւոր ժամանակում մեր մեծ օգնութեան սպասող ֆրակցիան ամբողջ ազգի օգտին այս կամ այն ձևով օժանդակութիւն ցոյց տուող անձնաւորութիւնների ձայնին և խորհրդակցութեանը կարիք է զգում, որի մասին և յայտնում է»։

Հետևաբար՝ «Աչըք Սէօզ» կարծում է, որ

Պատմական ներկայ րօպէին իսլամների անունով ասված խօսքը որոշ չափով հանդիսանալու է իսլամ հասարակութեան գաղափարի թարգմանը. ուստի և հարկաւոր է, որ Դումայի բացումից առաջ Թուրք ֆրակցիան՝ Կազանի, Ուֆայի, Օրէնբուրգի, Բագուի նման կարևոր կենտրոնների ներկայացուցիչները եթէ ոչ ամբողջութեամբ, գէթ մասնակի կերպով խորհրդակցէին Պետրոգրադում։

Ֆրակցիայի նախագահը՝ Մէհմէդ Թէֆֆէքիևվ՝ յիշեալ վայրերի ներկայացուցիչ-պատգամաւորներին արդէն առանձին հրաւէր ուղարկել է, և «Աչըք Սէօզ» ցանկութիւն է յայտնում, որ հրաւիրեալները չը թերանան իրանց պարտականութեան մէջ, մանաւանդ որ «ժամանակը թանգ է»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տաթև, 27 դեկտ.

Տաթևայ վանքը հայ իրականութեան մէջ խաղացել է խոշոր դեր, հնումն եղել է մի լուսատու ճրագ, որ լուսաւորել է իր շրջակայքը. այդ վանքից է դուրս եկել մեր հռչակաւոր Գրիգոր Տաթևացին։ Բայց այժմ այդ վանքում գտնվող ծխ. դպրոցը ամենաանմխիթար վիճակի մէջ է։ Ուսումնարանը, որտեղ սովորում են Տաթև, Սևլարանց և Տանձատափ գիւղերի գեղջուկ մանուկները, չունի դպրոցական ամենաանհրաժեշտ իրերը՝ սկսած աշակերտական կանոնաւոր նստարաններից։

Ուստի վերոյիշեալ դպրոցի վարչութիւնն և ուսուցիչները այսու դիմում են հայրենիքից հեռացած իրանց բաղդաւոր հայրենակիցներին և այն անձանց, որոնց համար թանգ ու սրտին մօտ է ժողովրդի կրթութեան, զարգացման գործը, օգնութեան գալ այդ դպրոցի կարիքները հոգալու և դպրոցը իր բարձր կոչման հասցնելու։

Խնդրում ենք նուիրատւութիւնը ուղարկել հետևեալ հասցէով. Герюсы (Елисаветпольск. губ. , черезъ Татевское арм. духов. правленіе, попечительству армянской Татевской церковно-приходской школы.

Նախագահ հոգաբարձութեան՝
Միքայէլ Տէր-Յակոբեան
Անդամք հոգաբարձութեան՝
Մեսրոպ Մկրտչեան
Կոստանդ Աթայեան
Ուսուցիչք՝ Լևոն Տէր-Կարապետեան
Ն. Դոռանց

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Պ. Տ. Նազարեանին

Սիրելի հայրենակից.

Աւելի քան գովելի ու մխիթարական, սփոփիչ ու կարեկցական կարող է լինել, քան քաղցածին հաց, մերկին զգեստ, թշուառ թափառականին տաքուկ բուն տալը։

Ահաւասիկ խրախուսանքի արժանի մի եզակի հիմնարկութիւն՝ «Հրատապ սփոփանք մայր հայաստանցիներին» սրտառուչ, ողբերգական անունով մկրտված։

«Հրատապը» իր մէջ ծուարում է հարիւրաւոր դժբաղդ հայրենակիցներ, որոնց ձեր յատուկ բարութեամբ սփոփում, գուրգուրում էք, ու ժամ մոռացնել տալիս տակաւին թարմ սրտամաշ արիւնոտ տեսարանները, անմոռաց թանգագին անյայտ շիրիմները, մոխրակոյտ դարձած պապենական շէն ու լի օջախները։

Սիրելի հայրենակից, Ղարաբաղի «Եղբ. Օգն.» կանանց կոմիտէն՝ գնահատելով ձեր ստեղծած բարի գործի անհրաժեշտութիւնը՝ ուղարկում է իր լուման՝ 200 ր. «Հրատապի» ճաշարանին, արտայայտելով մեր ցաւն ու վիշտը դէպի մեր տառապեալ քոյրերն ու եղբայրները։

Ցանկանալով վերադարձ քաղցրիկ վաթանիդ անուշ հայրենիքը, տեսնելու Հայաստանի վերածնութիւնը։

Օրհնելով ձեզ, արիաջան մեղուիդ, ցանկանում ենք արիութիւն, շարունակելու անխոնջ ջանքերով ստեղծած բարի գործը։

Ի դիմաց կենտր. Կոմիտէի՝
Նախագահ՝ Մ. Մելիք-Շահնազարեան
Անդ.-քարտուղար՝ Սաթ. Զաքարեան
Գանձապահ՝ Մ. Մելիք-Թանիեան
Շուշի

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԻՑ

Կալկաթա, 14 նոյեմ. 1915 թ.

Հայոց կեանքի ամենատրագիքական մոմենտում, երբ Հայաստանում ամեն տեղ մահ է սփռված, լեռներն ու դաշտերը ծածկված են հազարաւոր անմեղ հայերի յօշոտված դիակներով, երբ հարիւրաւոր ընտանիքներ սոսկալի զրկանքներ ու տանջանքներ կրելով՝ քշվել են Միջագետքի անհիւրընկալ անապատները այնտեղ գերեզման մտնելու, երբ վերջապէս տասնեակ հազարաւոր ցաւատանջ փախստական-գաղթականներ բնաջնջումից ազատվելով անասելի դժուարութիւններից յետոյ՝ ապաստան են որոնել Կովկասում և ներկայացնում արիւն սառեցնող մի դրութիւն, Գանգէսի ափերում ընկած այս հեռաւոր քաղաքում ևս գտնվել են հայեր, որոնք խորը ցնցվել են և փութացին կատարել իրանց նուիրական պարտականութիւնը։

Ահա քանի ամիս է, ինչ այստեղ կազմվել է Հայկական Նպաստամատոյց մի Ֆոնդ (Armenian Relief Fund), որի համագումարը հասնում է մօտաւորապէս 96,000 ռուփիի (6,400 ֆունտ ստերլինգ), պ. պ. Աբգար և Ընկ. հեռագիրով նուիրաբերած և ուղղակի փոխադրած 2,300 ֆունտ ստերլինգ գումարն ևս միասին հաշւած։ Հանգանակիչ Յանձնախմբի գանձապահ՝ պ. Յարութիւն Ստեփաննոսեանի միջոցով ցարդ ուղարկվել է երկու նուագով 2000 ֆունտ ստերլինգ, և մտադրութիւն կայ մնացեալ գումարներն ևս շուտով փոխադրելու։ Շնորհիւ Յանձնախմբի քարտուղար՝ տէր-Գարեգին ք. Յ. Կիրակոսեանի անձնական ջանքերի՝ մօտաւորապէս 21,000 ռուփի (1400 ֆունտ ստերլինգ) հանգանակվել է միմիայն տեղիս եւրոպական առևտրական հաստատութիւններից, բայց դրանով չը բաւականանալով՝ ի թիւս այլ կոչերի վերջերս հրատարակել է տեղիս «The Statesman» ամենանշանաւոր օրաթերթում մի նամակ, որով յանուն մարդասիրութեան և մարտիրոսագրված մի ժողովրդի՝ դիմել է խմբագրին, որպէսզի վերջինը մի խմբագրականով ի վեր հանէ հայերի գլխին պայթած սոսկալի աղէտի ահռելիութիւնը և կոչ անէ Կալկաթայի ընդհանուր հասարակութեան ազնիւ զգացմունքներին՝ օգնութեան ձեռք մեկնելու անտուն ու անտէր գաղթականներին։ Անպատեհ չեմ համարում ի տեղեկութիւն յարգելի ընթերցողների թարգմանել յիշեալ օրաթերթի խմբագրականը, որը լոյս տեսաւ մի շաբաթ առաջ։

«Թէև Հնդկաստանի համայն ժողովրդի հայրենասիրութեան ու մարդասիրութեան վրա պահանջներ շատ են եղել, սակայն բնաւ չէ կարելի անուշադիր թողնել Թիւրքահայերի ցաւատանջ բեկորների համար եղած օգնութեան կոչը։ Տէր-Գարեգին քահ. Յ. Կիրակոսեանի նամակը, որ այս առաւօտ ի լոյս ենք ընծայում, ցոյց է տալիս, որ մօտաւորապէս 300,000 Թիւրքահայեր պարտաւորվել են փախչել Կովկաս, որտեղ այժմ նրանք գտնվում են սոսկալի տառապանքի ու թշուառութեան մէջ, զրկված լինելով կեանքի ամենակենսական պիտոյքներից, և ենթարկված տարափոխիկ հիւանդութեանց։ Անհրաժեշտ է օգնութեան հասնել այս թշուառներին, որոնց համար Գարեգին քահանան դիմումն է արել։ Փախստականների թւի երկպատիկը օգնութիւն ստանալու հնարաւորութիւնից դուրս են, որովհետև վայրագաբար կոտորվել են կամ քշվել անապատները մեռնելու և կամ գերի վաճառվել։ Երևակայութիւնն անզօր է ըմբռնելու այն հրէշութիւնները, որոնք կատարվել են։ Լորդ Բրայսը լորդերի պալատում իր խօսած ճառի մէջ այսպէս է ասել. «Համարեա ամբողջ ազգը բնաջինջ է եղել, և ես չեմ կարծում պատմութեան մէջ և ոչ նոյն իսկ Լէնկթեմուրի օրերից ի վեր՝ արձանագրված լինի մի ուրիշ դէպք նոյնպիսի եղեռնագործութեամբ և հրէշութեամբ»։

«Եթէ մի յաղթող զօրապետ արիւնահեղ կռւի ամենատաք ժամանակ անգամ գործած լինէր այդպիսի ոճիր և ասէր՝ յաւիտենական անարգանքի սիւնին կը գամվէր. իսկ հայկական կոտորածների սարսափն աւելի սաստկանում է այն իրողութեամբ, որ կանխապէս ծրագրված էր Կ. Պոլսում գտնվող գերմանամոլ ու եղեռնագործ վարիչների խմբակից, իրանց քաղաքական նպատակներին հասնելու և իրանց գերմանական տէրերին սիրաշահելու։ Ինչպէս որ լորդ Բրայսը յայտնել է, կոտորածները հետևանք են մի քաղաքականութեան, որ ինչպէս երևում է՝ կանխամտածված է եղել «այն վոհմակի կողմից, որի ձեռքումն է գտնվում օսմանեան կայսրութեան ղեկը»։

«Յամենայն դէպս կոտորածների և փախուստների (կոտորածների մի ուրիշ ձևը) հրամանը Կ. Պոլսից է արձակված եղել։ Թիւրք մահմեդականների կողմից մոլեռանդութեան խնդիր չը կար։ Անմեղ արիւն թափելու յանցանքը չէ կարելի մուսուլմանների վրա ձգել։ Դէպքեր են եղել, երբ մուսուլմանները աշխատել են ազատել իրանց քրիստոնեայ դրացիներին։ Մի քանի Թիւրք նահանգապետներ բարեպաշտ ու մարդասէր լինելով՝ մերժել են իրանց վրա եկած հրամանները գործադրելու։ Լորդ Բրայսը երկու օրինակ է առաջ բերել, երբ նահանգապետները պաշտօնանկ են եղել Կ. Պոլսի կամարիլլայի եղեռնական հրամանները չը կատարելուն համար։ Այս բանում զարմանալի ոչինչ չը կայ, որովհետև իսկական Թիւրքը ինչ որ է՝ «մաքուր կռւող» է, ինչպէս Գալիպոլի Թերակղզում կռւող մեր զինւորներն են նկատել։ Այն մինիստրը, որը ուղղակի պատասխանատու է կոտորածներին, ինչպէս մենք արդէն ուրիշ անգամ ևս յիշել ենք, Թալէաթ-բէյն է։ Այս մարդն և այն խմբակն, որին պատկանում է, իսկական եղեռնագործներն են։ Էրլ Կրոմըրը, մարկիզ Կրիւն և լորդ Բրայսը աշխատել են պարզաբանել, որ սոսկալի կոտորածները, որոնց մասին լսել ենք, պակաս զզւանք չեն կարող պատճառել աշխարհումս գտնվող մուսուլմաններին, քան միւս քաղաքակիրթ ու մարդասէր ազգերին։ Ուղղակի դատապարտելի կը լինէր մուսուլմանների համար, եթէ գէթ մի րօպէ երևակայեն, որ նրանք համակրութիւն են տածում դէպի գլխաւոր մարդասպանները, և կամ զարշանք չեն զգում, ինչպէս մենք, Հայաստանում կատարված գազանութիւններից։ Միակ ազգը, որ անզգայ կարող է դիտել այս կոտորածները, գերմանացիներն են։ Մենք նախանցեալ օրը կոմս Րէվէնտլօվի խօսքերը մէջ էինք բերել, որոնցով Կ. Պոլսի վարիչների վոհմակի արարքներն էր վարագուրել ու մեղմացրել։ Եթէ գերմանական կայսրն և իր գործակալները չը թելադրեցին կոտորածները, գոնէ չարգելեցին։ Նրանք կարող կը լինէին ազատել հայերին, բայց չարեցին։ Նրանք լուռ հանդիսատես եղան, երբ ամբողջ մի ազգ կոտորվում էր։ Նրանք այսպիսով արատաւորել են գերմանական անունը մի այնպիսի ստորաքարշ ու անարգական գործողութեամբ, որպիսին ցոյց տուեցին հանդէպ Բէլգիայի։ Դժբաղդ զոհերը հեռու էին մեր գործնական պաշտպանութիւններից, երբ կոտորածների հրամանը դուրս ելաւ։ Միակ բանը, որ այժմ կարող ենք անել, այն է՝ որ օգնութեան ձեռք կարկառենք փախստական-գաղթականներին»։

Պոլարիս

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ղազվին, 14 յունվարի

Մուստոֆի-էլ-Մամալիքի դաւաճանական գործունէութիւնը պարզօրէն ցոյց է տալիս վերջերս ձեռք բերված մի դօկումենտ, որը գտնվում է Թեհրանի ռուսական միսսիայի ձեռքում։ Այդ փաստաթուղթը ձեռք է բերված շվէդացի մի օֆիցէրից, որին նոյն դօկումենտով պատուիրագրված է հէնց Մուստոֆի-էլ-Մամալիքի կողմից, որպէսզի շվէդացի մարդիկները իրանց ժանդարմական կազմով ենթարկվեն գերմանական դեսպանի հրամաններին և գործեն այդ հրամանների համաձայն՝ ընդդէմ ռուսական և անգլիական ուժերի, որովհետև,—ասում է նա իր այդ հրամանագրի մէջ,—Պարսկաստանի քաղաքականութիւնը գերմանացիների հետ է համաձայն։

Պարզվում է, որ ռուս-անգլիական միսսիաները իրանց պահանջի համար—անմիջապէս հրաժարեցնել Մուստոֆի-էլ-Մամալիքին—հիմք են ունեցել հէնց վերոյիշեալ դօկումենտը, որը ոչ ինքը և ոչ կառավարութիւնը չեն կարողացել հերքելու։

. . . . .

Ս. Յովեան

ՖԵԼԻԵՏՕՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԻՄ ՏԱՏԻՆ

VI

Սիրելի տատի.

Այս Ծննդեան տօներին ուզում էի գալ տուն, քեզ մօտ մի քանի օր ժամանակ անց կացնելու, բայց չը կարողացայ, որովհետև Ֆրանգեանն եկել է Թիֆլիս։

Դէհ, ի հարկէ, գիտես, ինձ համար աւելի հեշտ է զրկվել Ծննդեան տօներից, տապակած սագից ու բաղից, քան թէ մի մեծ մարդ տեսնելուց, մանաւանդ Ֆրանգեանից։

Հիմի դու կասես. «Ո՞վ է էս Ֆրանգեանը, որ իմ միամիտ թոռը յափշտակվել է նրանով ու չի ուզում գալ տուն»։

Իմ միամիտ տատի.

Դու դեռ աշխարհից շատ բան չը գիտես. և դեռ որքան ժամանակ է հարկաւոր քեզ, որ ամեն բան իմանաս։

Ասենք, դու գիտես, թէ ինչպէս են հաւը թուխս նստեցնում, քանի ձու են դնում նրա տակ, երբ է բողկը ցանելու իսկական ժամանակը և ո՞ր ամսին է ս. Խաչի տօնը։

Բայց դու չը գիտես, թէ ո՞վ է Ֆրանգեանը։

Եթէ Ֆրանգեանը իմանայ մի օր, որ դու իրան չես ճանաչում, սիրելի տատի, նա քեզանից սաստիկ կը նեղանայ, սաստիկ։

Ֆրանգեանը, սիրելի տատի, փիլիսոփայ է։

Իսկ դու մինչև այժմ ոչինչ չես լսել նրա մասին։

Դրանում, ասենք, մասամբ ես եմ մեղաւոր, որ ոչինչ չեմ գրել քեզ նրա մասին։

Բայց, ոչինչ, հիմա կը գրեմ։

Ի հարկէ, չը գիտես, թէ ինչ է փիլիսոփան։

Փիլիսոփան այն է, սիրելի տատի, որ մտածում է երևոյթի պատճառների, ընթացքի և վախճանի մասին։

Բայց ոչ, այս չեղաւ. ես էլ չը հասկացայ, թէ ինչ եմ ասում։

Քեզ հետ պէտք է միշտ օրինակներով խօսել, որ հասկանաս։

Օրինակի համար, եթէ դու օրերով նստես ու մտածես, թէ ինչպէս են ցանում գետնախնձորը, ո՞նց են ջրում, ո՞նց են բուդը լցնում և յետոյ ո՞նց են հանում ու ուտում, և որոշես գետնախնձորը ուտողները օպտիմիստ են թէ պեսսիմիստ, դու կը լինես փիլիսոփայ. բայց չը գիտեմ՝ Լէօն կընդունի՞ քեզ փիլիսոփայ թէ ոչ. որովհետև այդ իրաւունքը նրանից է կախված։

Ասենք, մտածելուց և փիլիսոփայ դառնալուց աշխարհի կարգը չի փոխվի. ոչ Դեբէդը կը ցամաքի, ոչ մեր գիւղացիները կը զրկվեն քեօխվի ծեծից, ոչ Արարատի գլխի ձիւնը կը հալվի, ոչ Յարութիւն Թումանեանը կը թողնի ոտանաւորներ գրելը և ոչ էլ Յովակիմ Սօլօվեանը կը դադարի բոլոր ժողովներում խօսելուց,—բայց այդ մտածելը այն հետևանքը կունենայ, որ մարդ կարող է ասել, թէ ես էլ մի բանով զբաղվում եմ, և դրա վրան կը ստանայ փիլիսոփայ կոչումը։

Մի խօսքով՝ Ֆրանգեանը այդպիսի մի փիլիսոփայ է։

Օրինակի համար, նա գիտէ, թէ Թիֆլիսից մինչև Իգդիր քանի վերստ է, գիտէ՝ ո՞վ է Սօկրատը, Շօպէնհաուէրը, Ֆիխտէն, Րօդենբախը և Նիցշէն. գիտէ նաև թէ Բեռլինի ո՞ր թաղում են գտնվում էժանագին ճաշարաններն ու հիւրանոցները։

Իսկ դու, սիրելի տատի, այս բոլորի մասին հօ ոչինչ չը գիտես. նոյնիսկ երազումդ էլ չես տեսել։

Բայց Ֆրանգեանը, օ՜հ, Ֆրանգեանը... նա ամեն բան գիտէ...

Ամեն բան գիտէ նրա համար, որովհետև ծնվել է Իգդիրում, ուսուցիչ է եղել Պարսկաստանում, թղթակցութիւններ է գրել «Մշակին», խօսել է Միքայէլ Վարանդեանի հետ և համբուրել է Խրիմեան Հայրիկի աջը։

Եթէ մի ուրիշը լինէր այս բոլորը տեսած ու արած, ի հարկէ, նա էլ իմաստուն մարդ կը լինէր, մանաւանդ Միք. Վարանդեանի հետ խօսելուց յետոյ։

Մոռացայ ասել, որ նա եղել է Բեռլինում, տեսել է Վիլհէլմ կայսրին, այնտեղ ռուսերէն թարգմանութեամբ կարդացել է Շօպէնհաուէրին և Նիցշէին։

Բեռլինում լինելը այն բարերար ազդեցութիւնն ունեցաւ, որ Ֆրանգեանը այնտեղից վերադարձաւ առանց միրուքի և կիսատ բեխերով։

Ու վերադառնալով, Երևանում հրատարակեց իր առաջին փիլիսոփայական աշխատութիւնը՝ «Միտք» ժողովածուն, որից մի օրինակ, յիշում ես, մի պուդ խնձորով զօռով մեզ վրա ծախեց մեր ծխական դըպրոցի ուսուցիչ Պօղոսեանը։

Կարծում եմ, դու պէտք է լաւ յիշես այդ գիրքը, որովհետև դրան կարդալու միջոցին էր, որ հայրս ստացաւ իր այդ անպիտան յօդացաւը և մարսողութեան խանգարումը, որոնցից մինչև այժմ բժշկվում է, բժշկվում և չէ առողջանում։

Ֆրանգեանը իր առաջին աշխատութիւնից յետոյ, սիրելի տատի, իրար ետևից հրատարակեց իր «Պէսիմիզմի փիլիսոփան», «Նիցշէն», «Փիլիսոփայ սօցիօլօգ» և «Յունական փիլիսոփայութիւն», ինչպէս և մի յօդուած, որի մէջ յայտնեց ի գիտութիւն ամբողջ աշխարհի, որ ռուսներն ունեցել են Նիկօլայ անունով չորս քննադատ՝ Բելինսկի, Չերնիշեվսկի, Դօբրօլիւբօվ և Միխայլօվսկի։ Մինչ այդ՝ ամենքը այնպէս գիտէին, թէ Բելինսկիի անունը Վիսսարիօն է. բայց Ֆրանգեանը յայտնագործեց, որ դա սխալ է, և դրանով մեծ ծառայութիւն մատուցեց ռուս գրականութեանը, որը յաւէտ երախտապարտ պէտք է մնայ նրան՝ այդ գիւտի համար։

Հապա, սիրելի տատի, որ քեզ ասում էի՝ «ինձ բարձր ուսումի տուր», սրա համար էի ասում, որ ես էլ այսպէս իմաստուն բաներ գրեմ, համ քեզ ուրախութիւն պատճառեմ, համ մեր խեղճ ազգին։

Իսկ այսպիսի գիւտեր անելու համար, պէտք է անպայման Բեռլին գնալ և փիլիսոփայ լինել, որ դու չուզեցիր լինեմ ես, և դրա համար մեր խեղճ ազգը մնաց աւելի խեղճ։

Ինչ որ է...

Մոռացայ ասել, որ Ֆրանգեանն ունի մի առաւելութիւն, որ մեր միւս փիլիսոփաներն ու գրողները չունեն ամենևին։

Նա հպարտ չէ, ինչպէս ուրիշները, և դրա համար էլ իր հրատարակած գրքերը ինքն է ծախում։

Բոլոր գրպանները խնամքով դարսում է գրքեր (ի հարկէ ծածկում է, որ չը գողանան) և փողոցներում շրջելով ու ծանօթներին պատահելով՝ տալիս է մի-մի օրինակ, ասելով.

— Վերցրէք, սիրելիս, փողը յետոյ կարող էք տալ. ոչինչ...

Կամ՝

— Այս մէկը ձեզ նուէր, յարգելի բարե-

ԴՈՒՔ ԻՆՁ ՊԷՏՔ Է ԱՆԷՔ ՆԵՐԿԱՅ ՏՕՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԸ ՊԷՏՔ Է ԻՄԱՆԱՅ, ԴԱ ԳԱՂՏՆԻՔ ՉԷ,

որ մարդ երբեք չէ գործադրում այնքան կերակուր և չէ ծանրաբեռնում ստամոքսը այնքան խորտիկներով, որքան մեծ տօներին:

Միլիօնատէր մարդիկ, որոնք ունեն փորկապութիւն, ստամոքսացում, մայասիլ, ապենդեցիտ, աղիքների ատոնիա և այլն, որոնք երկար ամիսներ ծոմապահութեամբ են անց կացնում, տօների մոռացութեան են տալիս այդ ամենը, և եթէ նոյն իսկ չեն էլ մոռանում, այնու ամենայնիւ անզօր են գտնվում ծոմ պահել: Մենք ցանկանում երկար կանգ առնել այդ հարցի վրա, որովհետև շատ թէ քիչ հասկացող և ինտելիգենտ անձինք իրանք շատ լաւ հասկանում են, որ գանազան տեսակ կերակուրներն ու ոգելից ըմպելիքները, որոնք առատ են գործադրվում, առաջ են բերում լուծաթաղանթի գրգռումն և յետագայում երեան են գալիս մարսողութեան խանգարումն, փորկապութիւն, ստամոքսացում, աղիքացում և այլն: Մտածեցէք լուրջ կերպով գէթ մի րոպէ, չէ՞ որ դուք էս ներկայումս ինչ-որ ծանրութիւն էք զգում ձեր ստամոքսի մէջ և մարսողութեան խանգարումն ունէք. դուք այդ բացասել չէք կարող, այլ ընդհակառակը, ինքներդ կը հաստատէք, որ դա մտացածին բան չէ, այլ իրողութիւն է: Ամենքի կողմից ճանաչված և ապացուցված է, որ մարսողութիւնը կանոնաւորելու և փորկապութիւնը բուժելու համար, նոյնպէս և ստամոքսացումի, մայասիլի դէմ միակ արմատական և ուղիղ միջոց համարվում են բացառապէս «ԿԱՏԱԳԷՄՕ» դեղհատիկները: Եթէ ձեզ դեռ յայտնի չէ «ԿԱՏԱԳԷՄՕ» դեղհատիկների ներգործութիւնը, յատուկ խնդրում ենք այդ մասին տեղեկանալ ձեր ծանօթների շրջանում, և մենք հաւատացած ենք, որ կը գտնվեն շատերը, որոնք գործածել են այդ դեղհատիկները և բժշկվել ծանր տանջանքներից, կամ թէ նոր են սկսել բժշկվել և նկատել «ԿԱՏԱԳԷՄՕՅԻ» բարերար և բուժիչ ներգործութիւնը: Բոլոր այն հիւանդները, որոնք գործ են ածել «ԿԱՏԱԳԷՄՕ» դեղհատիկները, վկայում են, որ հետևանքները միանգամայն հրաշալի են: Պահանջեցէք բոլոր դեղատներում և դեղավաճառանոցներում բացառապէս «ԿԱՏԱԳԷՄՕ» դեղհատիկները: Մօտակայ դեղատանը չը գտնելու դէպքում խնդրում ենք դիմել անմիջապէս մեզ. Тифлисъ, Эриванская пл., Пушкинская, 3/0 М., лабораторія М. Деламуре. Օտարաքաղաքացիներին ուղարկվում է վերադիր վճարով:

Զգուշացէք յաւակութեամբ վատ և առողջութեան համար վնասակար կեղծումներից ու նմանողութիւններից: Անպայման պահանջեք Մ. Դէլամուրէի «ԿԱՏԱԳԷՄՕ» դեղհատիկները՝ կարմիր բանդերոլով, մակագրված՝ Интернаціональное Медико-Фармацевтическое Депо.

(և.հ.կ.) 13. 10—8

կամ. այս 10-ը օրինակն էլ վերցրէք, ձեր շրջանում ցրելու... փողը վաճառքից յետոյ կարող էք. ոչինչ...

Իսկ եթէ ծանօթներն ու բարեկամները օտար քաղաքներում ու գիւղերում են ապրում, նա պօստով դրանցից ամեն մէկին ուղարկում է 10 կամ 20 օրինակ, գրելով.

— Ծախեցէք ինչով էլ լինի, եթէ հաւ էլ տան, վերցրէք, ոչինչ...

Ահա այս ժամանակ էր, սիրելի տատի, որ ուսուցիչ Պօղոսեանը մի պուդ խնձորով մեզ վրա ծախեց նրա «Միտքը»:

Ի վերջոյ, աւելացնեմ, որ Ֆրանգեանը այս վերջին տարիները էլ փիլիսոփայական գրքեր չի հրատարակում. հիմա նա գրում է միայն փիլիսոփայական յօդուածներ «Արշին մալ ալանի» և ուրերի մասին:

Ահա, սիրելի տատի, սա է Ֆրանգեանը, որի Թիֆլիս գալու պատճառով՝ ես տուն չեկայ այս Ծննդեան տօներին:

Չեկայ, որովհետև մեծ մարդկանց տեսնելը մի առանձին բաղդ է, որ չի պատահում 10 տարին մի անգամ, իսկ Ծննդեան տօնը հօ ամեն տարի կրկնվում է իր փլաւով, ձկնով, գաթայով և տէրտէրների ու տիրացուների տնօրհնէքով:

Եկող տարի Ծննդեան տօներին կը գամ անպատճառ:

Մնամ քեզ սիրող՝ քո Թոռնիկ

Խմբագիր-հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՅՏԱՐԱԳԻՐ

Մոզդոկ, 12 յունվարի

Վանի յուլիսեան մեծ գաղթի ժամանակ վանեցի Վահան Տէր-Գրիգորեանը, իր կին Սոզմէի և 4 որդիների հետ, Բերկրիի կամուրջի մօտերքը քիւրդերի յարձակումից յետոյ, անյայտ է մինչև այժմ: Այդ 6 հոգուց կազմված ընտանիքի որևէ մէկ անդամի ողջ լինելն էլ անյայտ է: Սրանով խնդրում եմ բոլոր հայրենակիցներիս և գաղթականական մարմիններին, որ բարի լինեն այդ ընտանիքի մասին եթէ որևէ տեղեկութիւն ունեն՝ յայտնել ինձ՝ Մոզդոկ հայոց դպրոց. կամ Тифлисъ, Большая Ванкская № 21, Ներսէս Տէր-Գրիգորեանին. կամ Երևան, Յարութիւն Տէր-Գրիգորեանին, ս. Սարգիս եկեղեցում:

Որդիների անունները են՝ Արսէն, Արշալոյս, Բերկրուհի և Ռոստանիկ:

Ռ. Իսկէնդէրեան

Թիֆլիս, 18 յունվար

Ալեքսանեան Յակոբի 12 տարեկան վանեցի տղան՝ Գուրգէն Ալեքսանեանը Վանի մեծ նահանջին ռուս զինուորներու կողմէն վերցուած է և որբախնամներուն է յանձնուած: Մայրը՝ Զարուհի և մեծ եղբայրը՝ Հմայեակ Ալեքսանեանները պաղատագին կը խնդրեն որբանոցներու վարչութիւններէն տեղեկացնել, թէ ուր կը գտնուի յիշեալ տղան:

Հասցէ՝ Успенскій пер. № 3. д. Александрова. Բարունակ Կապուտիկեան

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Պուշկինի, Վորոնցովի արձանի հանդէպ)

ԲԱՑ է ամեն օր, բացի կիրակի օրերից

«806»-ի եւ «914»-ի Ներսըսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԲԺԻՇԿՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն:

Բ. Գ. ԱՂԱԲԱԲԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.:

Մ. Մ. ԲՈՆԻԱԹՕՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի քթի հիւանդութ.

Ռ. Գ. ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆ—12—1 ժ. երեխ., հիւանդ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.:

[illegible]

Մ. Մ. ԲՈՆԻԱԹՕՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.: Չքաւորներ ձրի: Համախորհրդի (40 [illegible]) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—15

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ГЕМОРРОЙ
ЗАПОРЪ
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО,
ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М. ДЕЛАМУРЕ.

ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ
И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ
ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3.
ВЕРХНІЙ ЭТАЖЪ.

761. 50—25 (հ. կ.)

Լոյս տեսաւ եւ վաճառվում է

Յար. Թումանեանի «ԱՐՏԱԽԱԶԴ II» ֆէներեայից ժողովրդի խմբերգը

«ԿՈՐԾԱՆՎԵՑԱՒ ՉԱՐԸ ԽՍՊԱՌ»

Քառաձայն խառը խմբի համար a capella.

Երաժշտութիւնը հեղինակութիւն ԵՂԻՇԷ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ. Գինն է 50 կ.:

Դիմել՝ Москва. Музыкальная торговля В. Бессель и К°, Петрока. կամ հեղինակին՝ Лазаревскій Институтъ Восточныхъ Языковъ. (օ.մ.) 71. 3—1

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան հսկողութեան ներքոյ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ

Տ. Մ. ՓԻԼՕՑԵԱՆԻ

ԵՐԿՍԵՌ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ

(Թիֆլիս, Միխայլօվսկի պր., № 24, տելեֆոն № 9—76.)

Խնդիրների ընդունելութիւնը յունվարի 1-ից: Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ից: Ծրագիրներն ու կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատնից:

955. 25 21

(ա. օ.)

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1-ԻՆ ՏԱՐԻ ՎԱՆ-ՏՈՍՊ 1-ԻՆ ՏԱՐԻ

Հասարակական, քաղաքական, գրական շաբաթաթերթ:

ԲԱԺՆԵԳԻՆՆ Է ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Տարեկան 4 ր., կէս տարվան 2 ր. 50 կ., ամսական 40 կ., հատը 10 կ.:

Արտասահմանում տարեկան 15 ֆր., վեցամսվան 8 ֆր.:

«ՎԱՆ-ՏՈՍՊԻՆ» վերաբերեալ նամակները, հեռագիրները և դրամը պէտք է ուղարկել միմիայն խմբագրութեան հասցէով: «ՎԱՆ-ՏՈՍՊ» շաբաթաթերթը ունի իր յատուկ խմբագրական կազմը և որևէ առնչութիւն չունի «Աղբիւրի» և «Տարազի» խմբագրութեան հետ: «ՎԱՆ-ՏՈՍՊԻ» հասցէն՝ Тифлисъ, Головин. пр. 41. Редакція арм. журнала «ВАНЪ-ТОСПЪ». արտասահմանից՝ Rédaction du journal Arménien «VAN TOSP», Russie, Tiflis, Golovinski pr. 41. 63. 5—2

ՎԵՐՋ ՄԱՐԴԿԱՆՑ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԻՆ

ՏՐԻՊԵՐԻ (սուսանակ) ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Սուսանակը մի քանիսի կարծիքով անբուժելի հիւանդութիւն է, իսկ մի մասի էլ՝ թէև բուժելի, բայց պահանջում է երկար ու ձիգ ժամանակ և նիւթական մեծ ծախք, բացի բարոյական տանջանքներից: Այժմ այդ հիւանդութիւնը բըժշկվում է երեք շաբաթվայ միջոցում «Ռապիդ» միջոցով, որ ես եմ հնարել և թոյլ է տրված բժշկական խորհրդով № 1295 վկայաթղթով:

Այս միջոցը հինգ տարվայ ընթացքում բուժել է մի քանի հազար հիւանդների և մեծ անուն հանել թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում: Բայց մինչև այժմ էլ կան հիւանդներ, որոնք կասկածով են վերաբերվում իմ յայտարարութեանց:

Այն կասկածանքը բնական է, որովհետև վերջին մի քանի տարիներում այնքան «հրաշագործ» դեղեր են ի վաճառ հանվել, որոնք շուտափոյթ բուժումն են խոստանում, որ հիւանդը կարդալով յայտարարութիւնները ոչ միայն դըժուարանում է դրանցից ընտրել, այլ և սկսում է կասկածել նրանց տուած խոստումների վերաբերմամբ:

Գուցէ շատ հիւանդներ փորձել են մի քանի դեղեր և՝ գուցէ՝ հիասթափվել նրանց ներգործութեան ու խոստումների վերաբերմամբ, բայց դա չէ նշանակում, որ բոլոր դեղերն այդպէս են: Իմ առաջարկած միջոցը երեք շաբաթվայ ընթացքում բուժում է այս հիւանդութեանը ամենահնացած տեսակը:

Հինգ տարվայ ընթացքում ստացել եմ մեծաքանակ շնորհակալական նամակներ, որոնք ինձ թոյլ են տալիս յայտնել, որ «Ռապիդ» գործ ածելու ժամանակ չը բուժելու դէպք չէ եղած և իւ[illegible], որ գործ է ածել երկու կրկնակի սրուակ «Ռապիդ», անպայման առողջացել է, ուրեմն որ հիւանդութիւնը տևած լինէր:

Հիւանդների ուշադրութիւնն եմ հրաւիրում այն հանգամանքի վրա, որ իմ հաւաստիացումը «Ռապիդ» միջոցի մասին և իմ խոստումները ի զուր չեն, [illegible] Թիֆլիսի բաժանմունքից ամեն մի 2 սրուակ «Ռապիդ» (բուժման ամբողջ կուրս) ես ձրի [illegible] գրելու եմ դեղի հետ միասին ՊԱՐՏԱՒՈՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ, ՓՈՂԸ ԵՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, եթէ [illegible] չը բժշկվի: Այս թղթի պատճէնը այս է.

«Ես, ի ներքոյ ստորագրեալս, տալիս եմ այս թուղթը պարոն [illegible] այն բանի համար, որ ծախելով նրան «Ռապիդ» պրեպարատի 2 կրկնակի սրուակ [illegible] խոստանում եմ, որ 20-օրեայ գործածութիւնից յետոյ՝ նրա հիւանդութիւնը բոլորովին կանհետանայ: Եթէ այդ ժամանակամիջոցում, նրա հիւանդութիւնը, լաբորատորիայում նրա մէզը քննութեան ենթարկելուց յետոյ, բուժված չը լինի, այն ժամանակ 9 ր. պարտաւոր եմ վերադարձնել»:

Աւելի լաւ համոզելու համար ես վերցրի ամեն մի յայտարարութեան մէջ տեղաւորել նորանոր շնորհակալական նամակներ: Այս նամակների բնագիրները պահվում են ինձ մօտ և ցանկացողները կարող են միշտ էլ տեսնել: Այս նամակների իսկութեան համար ես պատասխանատու եմ և դրանց կեղծութիւնը ապացուցանելու դէպքում ես պատրաստ եմ վճարել 1000 ռ., որևէ բարեգործական նպատակով:

Մեծ. պ. Դէլամուրէ! Պատիւ ունեմ յայտնելու ձեզ, որ ձեր «Ռապիդ» պրեպարատը 20 օր գործածելուց յետոյ ես ինձ միանգամայն առողջացած եմ զգում, որի համար և արտայայտում եմ ձեզ իմ անկեղծ շնորհակալութիւնը: Ձեր պրեպարատը կաշխատեմ տարածել իմ ընկերների և ծանօթների շրջանում: Սրանով վերադարձնում եմ ձեզ ձեր պարտագիրը՝ դրամը վերադարձնելու մասին: Մնում եմ յարգանքով՝ Ս. Ս.: Խասաւիւրտ (Տերսկի շրջ.), 5 մարտի 1914 թ.:

Երկու կրկնակի սրուակ և մի արկղիկ պիլիւլներ (լրիւ բժշկվելու կուրս) գինն է 9 րուբլի: Վերադիր վճարով և ճանապարհածախսով 10 րուբլի: Վերադիր վճարով ուղարկվում է 3 ր. կանխավճար ստանալուց յետոյ:

Պատուէրները հասցէագրել միմիայն.

Въ Кавказское отдѣленіе Московской лабораторіи М. Деламурэ, Тифлисъ, Эриванск. пл., Пушкинская 3, отд. 2 М, верхній этажъ, противъ Городской Управы, д. Кредитнаго О-ва.

Հեռագրական հասցէն՝

Тифлисъ—Американецъ.

(կ.) 609. 50—21

ПРИ ГОНОРРЕѢ

въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ

„АРМАТИНЪ" А. Я. АКУЛІАНЦА

„Арматинъ" совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ для внутренняго употребленія къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина" не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.

ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ" А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ" только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рец. вр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.

174. 87 (կ. կ.)

Մամուլին յանձնվեց

Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ

Պատմութիւն Աղթամարայ Կաթողիկոսութեան

I. Աղթամարի կաթողիկոսութեան պատմութիւնը:

II. Աղբիւրներ՝ Ղազար վարդապետի Աղթամարայ կաթողիկոսութեան պատմութեան ձեռագիրը ամբողջովին: Նոյն կաթողիկոսների կոնդակներ, անտիպ ժամանակագրութիւններից ու յիշատակարաններից քաղուածներ: (24) 20. 2-2

Ուսուցիչներ բարձրագոյն կրթութեամբ պատրաստում են գիմնազիաների պատրաստական և I դասարանները մտնելու համար: Ընդունելութեան ժամը 2—4, իսկ կիրակի օրերը առաւօտեան ժամը 10—12: Հասցէն՝ Архивной пер. д. 22, квар. Харазова. (ա.օ.) 73. 5—1

ԲԺՇԿ. ՖԵԼԴՇԵՐ

Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժշկներից որը մամբ՝ ու սկսում եմ, մասամբ ձեռքով և էլեկտրականով և մի հիմնաւոր բժշկութիւն [illegible] խրոնիկական օրգաների. փափուկ ու կոշտ չանկրի, սեռական թուլութեան և անկարողութեան բժշկութիւն նոյն այն դեղերով [illegible] խորհուրդներ: [illegible] Թ[illegible] ժամը 3 [illegible] ժամը: Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру

А. Г. ЕСАЯНЦУ.

Ինձ մօտ ծախւում են իմ կազմած 1) «Վեներական և խրոնիկ բժշկութեան» [illegible] 2) «Փորձ [illegible]» [illegible] 3) [illegible] 4) [illegible] 5) «Բաժին», գ. 10 կ. և [illegible] ճանապարհածախս 20 կոպեկ:

311. 100—85

(հ. կ.)

ՕԳՏՎԵՑԷՔ ՅԱՐՄԱՐ ԱՌԻԹԻՑ

ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՔԵՐՋԵԱՆԻ

ՀԻՊՆՕՏԻԶՄԻ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ

ՄՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Գործնական հոգեբանութեան

ԿՈՒՐՍԵՐԸ

Այս նոր կուրսերը մանաւանդ պատրաստված են այն նպատակով, որ ընթերցողը կարողանայ սովորել Հիպնօտիզմը առանց ուսուցչի, առանց մեծ ծախսերի և առանց [illegible] միջնորդի սուղ մօտ [illegible]:

Ընթերցողը Հիպնօտիզմին տիրապետելուց յետոյ՝ կարող է բուժել զանազան տեսակ հիւանդութիւններ, որոնք նշանակված են 32-րդ դասում:

Հիպնօտիզմով կարելի է վերացնել վատ սովորութիւններ երեխաների մէջ. գողութիւն, ծուլութիւն, ծխել, մի խօսքով արմատախիլ անել ինչ որ վատ է, ու նեցուկ լինել ինչ որ լաւ է և օգտակար:

Հիպնօտիզմով դուք կարող էք ուղարկել ձեր ենթակային հեռու վայրեր, ուր գտնվում են ձեր սիրելիները և բարեկամները, որ նրանցից տեղեկութիւն բերի ձեզ:

Հիպնօտիզմով դուք կարող էք, բացի գաղտնիքների մէջ թափանցելուց՝ տալ և առաջարկել [illegible] (տեսարաններ): Հիպնօտիզմով դուք կարող էք ցեցուցիչ և ծիծաղ առաջ բերող սէանսներ [illegible] կարող էք կորցրել կամ թաքցրած իրերի տեղը իմանալ և վերցնել ձեր իրերը, կամ ուր էք կորցրել [illegible]:

Արժէքն է [illegible] թութերի համար պէտք է դիմել նամակով հետևեալ հասցէով՝ СУСАННА ШЕКЕРЖЯНЪ, Вельяминовская ул. № 22, Тифлисъ.

766. 20—15

(կ.)

Համառուսական Քաղաքների Միութեան Կովկասեան Բաժանմունք

Զօրքերի համար կօշկային թաթեր և դաշոյններ պատրաստել տալու Առանձին Յանձնաժողովը սրանով հրաւիրում է նրանց, որոնք կը կամենան դաշոյններ մատակարարելու գործն իրանց վրա վերցնել:

Դաշոյնի չափն է 17 դիւյմ. պէտք է լինի լաւ պողպատից, պատեանը սև գոյնի:

Յայտարարութիւնները խնդրվում է ուղղել Յանձնաժողովի անդամ պ. Ժուրուլիին Թիֆլիսի Քաղաքային Ուպրավայում: (ա. օ.) 63. 3—3

Առեւտրական դպրոց իրաւունքներով եւ

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՅՈՎՆ. ՋՆՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ

Ընդունելութ. դեկտ. 29-ից, պարապմունքները՝ յունվարի 11-ից: Նոյն տեղը վաճառվում են Սագարէջոյի [illegible] քառ. սաժ. 20 կոպէկով այգու համար առողջարար հողամասեր, որ գտնվում են [illegible] (Կախէթեան երկ.) 3 վ. հեռ. վրա կայարանից 5 վ., իսկ Տօխլիաուրսկի պլատֆորմայից 10—9

961 I Тумановская ул., с. д. № 13.

Типографія „ЭКОНОМІЯ", Тифлисъ